№ 19 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 27 — 1907 — ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 27 № 19

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտահար Մարգարիտ, Յովհաննէս և Քրիստափոր Անիսեանցները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին առաջինը իր տեգոր-որդւ, վերջինները իրանց թանկագին հօրեղբօրորդւ

Ստեփան Կարապետեան Անիսեանցի

մահը։ Հոգեհանգիստը տեղի կունենայ շաբաթ, յունվարի 27-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը իր սեփական տնից (Բազիեզնի փող. № 4. Վօրոնցօվի արձանի մօտ) դէպի Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցին (Րէալական դպրոցի դիմաց) առաւօտեան ժամը 10-ին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

(շ.) 1—1

Վշտահար Մարիամ Մինասեան և Մարիամ Յովհաննիսեանը իրանց Լևոն, Սիրանոյշ, Գարեգին, Կարպօ, Օնիկ որդոց հետ և Սարգիս Մկրտչեան Պօղոսեանը յայտնում են բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր թանկագին որդու, երկրորդը՝ սիրասուն ամուսնու և միւսները՝ իրանց անմոռանալի հօր, իսկ վերջինը իր մօրեղբօր՝

Ստեփան Կարապետեան Անիսեանցի

մահը։ Հոգեհանգիստը տեղի կունենայ շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը կիրակի, յունվարի 28-ին, առաւօտեան ժամը 10-ին, սեփական տնից— Разъѣзжая ул. № 12, Վօրոնցօվի արձանի մօտ, դէպի Թանդոյեան եկեղեցին, րէալական դպրոցի դիմաց։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ առ. ու. շ. 2—2

Երէկ, յունվարի 25-ին, Թիֆլիսում, կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Պեօտր Ալէկսաեվիչ Օպօչինին,

որի մասին յայտնում է վշտացած ընտանիքը։ Յուղարկաւորութիւնը այսօր, շաբաթ, յունվարի 27 ին։ 2—2

Պետական Դումայի ընտրութիւնների մասին

Թիֆլիսի նահանգի կառավարչի կողմից։

1907 թւի յունվարի 28-ին պիտի պատուիրակներ ընտրվեն քաղաքային ընտրողական ժողովի համար, որի համար Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հետևեալ շէնքերն ի նկատի ունի.

1) Առաջին քաղաքամասում—Վերայի հրապարակի վրայի քաղաքային խանութների շէնքը։
2) Երկրորդում—Զուբալօվի անուան աղքատների տունը։
3) Երրորդում—Քաղաքային Պուշկինեան գրադարանի շէնքը։
4) Չորրորդում—Քաղաքային վարչութեան շէնքը։
5) Հինգերորդում—Քաղաքային արհեստագիտական դպրոցը։
6) Վեցերորդում—Քաղաքային Պուշկինեան դպրոցի շէնքը։
7) Եօթներորդում—Վարշամօվի թատրոնը։
8) Ութերորդում—Առևտրական դպրոցը։
9) Իններորդում—Թիֆլիսի կրուժոկի ամառային շէնքը։
10) Տասներորդում—Զուբալօվի անուան ժողովրդական տունը։

Ընտրութիւնների արդարութիւնն ապահովելու եւ ընտրողների՝ իրանց լուրջ եւ պատասխանատու պարտականութիւնը անխափան կատարելու համար, հէնց իր՝ ազգաբնակութեան ՇԱՀԵՐԻ տեսակէտից հետեւեալ միջոցներն են գործադրվում.

1) Վերոյիշեալ շէնքերը մտնել թոյլատրվում է միայն նրանց, որոնք սահմանված և քաղաքային վարչութեան կնքած բիլլետներ ունեն (ընտրողական թերթիկներ)։

2, Շղթայած տեղերի մուտքի կէտերում ոստիկանների հերթապահութիւն է նշանակվում, որոնց պարտքն է թոյլ տալ, որ միայն նրանք անցնեն, որոնք համապատասխան քաղաքամասի ընտրողական յանձնաժողովի հերթապահ անդամներին կը ներկայացնեն հարկաւոր բիլլետները (ընտրողական թերթիկներ), այսինքն քաղաքային վարչութեան կնքով։

Ծանօթութիւն։ Այն ընտրողները, որոնք չեն կարողացել բիլլետներ ստանալ, կամ կորցրել են, կարող են ընտրողական յանձնաժողովի հերթապահ անդամներից ստանալ, ներկայացնելով իրանց անձի վկայաթուղթը։

4) Շղթայած տեղերի սահմաններում ընտրութիւնների ամբողջ ժամանակ փակվում են բոլոր մագազինները, խանութները և միւս ամէն տեսակի առևտրական ու խմիչքեղէնի խանութները։

5) Եթէ հասարակութիւնը պէտք ունի անցնելու փողոցների այն տեղով, ուր ընտրութիւններն են կատարվում, հրաւիրվում է առանց կանգնելու անցնել ընտրութիւնների շէնքի դիմացից, որովհետև ոստիկանութեանը հրամայված է ոչ մի համախմբում չը թոյլատրել։ Իսկ Վերայի կամրջի և Վելիկօկնեաժեսկայա փողոցի միջև Կիրօչնայա փողոցով անցնելիս ոչ թէ մայթերով պիտի անցնել, այլ փողոցի միջից, այն էլ առանց կանգնելու, որովհետև թէ Թիֆլիսի կրուժոկի ամառային շէնքի և թէ Զուբալօվի անուան ժողովրդական տան կից մայթերը պիտի շղթայված լինեն։ (առ.) 2—2

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսախանեան

ՄԱՍՆԱԳԷՏ

ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիևսկայա 15, Փրիդօնովի տանը։

առ. (չ.ու.շ.) 33—100

ԿՕՇԻԿՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

(1901 թ. արժանացաւ մեդալի)

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ թէ տղամարդկանց և թէ կանանց նուրբ տեսակի

ԿՕՇԻԿՆԵՐԻ

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ

Պատուէրները կատարվում են բարեխղճութեամբ և երաշխաւորութեամբ։ Վէլեամինօվսկայ փողոց, տ. Խօսրօեվի։

Դարչինեան

առ. (ա. օ.) 7—12

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ԲՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԽԱՆՉԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. չրեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻԾԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ

Բժ. Ֆ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԴՑԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԵԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ Գ, ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամէն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. — 5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծամանների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 52—144

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, յունվարի 22-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

Յ. ԶԱՐԻՖԵԱՆԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

Առաջին անգամ հայոց բեմի վրա

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դրամա 5 արար., Հաուպտմանի թարգմ. Վ. Տիրացեանի

Մասնակցում են՝ տ. տ. Արաքս, Մայսուրեան, Յասմիկ, Վարդուհի, Օհանեան, պ. պ. Աբէլեան, Աղաբէգեան, Զարիֆեան, Մանուէլեան, և Յարութիւնեան,

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է

Տեղերի գները բենեֆիսի են

Վարչութեան հերթապահ անդամ՝

Կ. Շիրինեան

Ռեժիսսեր Յ. Աբէլեան

առ. 1—2

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՉ"

հումօր, սատիրիկ-սիմվօլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

VI-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ"

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։

Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 րուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.

«ՍԱՓՐԻՉ»-Ի խմբագրութիւն

Ե. շ. առ. 2—25

Մի այրի կին,

որի աչքերը վնասված են, հնարաւորութիւն չունի իր որբերը պահելու, խնդրում է բարեգործներին օգնել իրան։ Հասցէն Авлабаръ Мартговская ул. № 8 Кекелъ Яралянъ.

(Հ. շ.) 2—2

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՉԵՉ

(искуственная вощина)

Պատրաստում եմ ձեռնտու գնով, փետրվար և մարտ ամիսներում

Հասցէս Сел. Бол. Караклисъ Аветису Агабабянцъ։

առ. օր. մ. 4—15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատուիրակների ցուցակը. Դրօշակի մաքրութիւնը. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Մամուլ. Տեղեկութիւններ գաւառից. Կուսակցութիւնների և դաշնակցութիւնների շուրջը. Հերցենշտէյնի գործի առիթով. Սպառնացող արձագանք մը. Կեանքի շուրջը. Ներկայացուցչական կառավարութիւն. Հարկեր են հաւաքում. Ի զուր են գլուխ պատռում. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Թիֆլիսի առաջադէմ ընտրողները իրանց խորհրդակցական ժողովներում կազմել են պատուիրակների հետևեալ ցուցակը.

Առաջին քաղաքամասում

1) Միխայիլ Նիկօլաևիչ Վասիլօվզօրօվ, բժ., քաղաք. դումայի ձայնաւոր, Կիրպիչնի փող. № 13.
2) Միխայիլ Դիմիտրիևիչ Ելչուկօվ, գիմնազ. ինսպէկտոր, Արագվինսկի փողոց, № 10.
3) Պեօտր Իվանովիչ Զաչինեաև, գիմնազ. ուսուցիչ, Կօրգանօվսկայա փողոց, № 9.
4) Միխայիլ Գրիգորիևիչ Կօնիև, գիմնազ. ուսուցիչ, Սապեօրնայա փող., № 37.
5) Ալէքսանդր Եակօվլևիչ Մամինօվ, բժիշկ, Կօրգանօվսկայա փող., № 18.
6) Իպպօլիտ Իվանօվիչ Պլամենեվսկի, գիմնազ. ուսուցիչ, Վօյեննայա փող., № 3.
7) [illegible] նօմ, քաղ. դումայի ձայնաւոր, Ուզլնի փող., սեփ. տուն.
8) Գավրիիլ Բէժանովիչ Սակվարելիձէ, մասն. հաւատ., Արծրունիևսկի փող., № 27.
9) Աբգար Մարկիանովիչ Ռոտինեանց, բժիշկ, Գօլօվինսկ. պրօսպ., № 39.

Երկրորդ քաղաքամասում

1) Դօլուխանեան Պավել Մարկովիչ, երդուեալ հաւատարմատար, Պասկևիչի փող., սեփ. տուն.
2) Քալանթար Ալէքսանդր Հայրապետեան, խմբագիր, Գրիբօեդօվսկայա, № 5.
3) Տուրկևիչ Եվգենիյ Մարկովիչ, երդուեալ հաւատարմատար, Սուզէրնայա № 19.

Երրորդ քաղաքամասում

1) Կրասնեանսկի Բորիս Գրիգորիևիչ, հանքագործ, Բարեատինսկայա № 8.
2) Սեմէօնօվ Իւլի Ֆեօդօրօվիչ, մանկավարժ.
3) Թումանօվ Իշխան Գէօրգի Միխայլովիչ, հրապարակախօս, Բարեատինսկայա № 8.

Չորրորդ քաղաքամասում

1) Ալիխանեան Կօնստ. Միք., իրաւաբան, Լերմօնտ., 21.
2) Վերմիշեան Քրիստ. Ամբակ., խմբագիր, Միքայէլեան փող. № 10.
3) Քալանթարեան Պետր Արտէմ., իրաւաբան, Վօզնեսէնսկի № 8.
4) Մգեբրօվ Լևոն Եակովլ., նոտար, Երևանեան հրապար. № 2.
5) Մելիք-Ազարեանց Ալէքսանդր. Սերգ., սեփ. տուն.
6) Օտտեն Ֆերդ. Կօզլօվիչ. Սօլօլակսկի փող. № 8, դեղագործ.
7) Պարօվ Իվան Եգօրօվիչ, բանկի կառավ., Լաբարատ. սեփ. տուն.
8) Մատուրեան Սերգէյ Արտեմ., ուսուցիչ, Կօջօրսկի փող., սեփ. տուն.
9) Շահպարոնեան Սամուէլ Պօղոս. բժ., Բոլնիչնայ փող.

Հինգերորդ քաղաքամասում

1) Գոնիև Բժիշկ Կօնստանդին Ագաֆօնօվիչ, Բեբուտօվսկայա փող., սեփ. տուն.
2) Ռուբէն Աբգարովիչ Յովհաննիսեան, երդ. հաւ. օգն., Բեբուտօվսկայա փող. տուն Գօնիևի,
3) Ստեփան Սերգէևիչ Մալխասեանց, էկզարխի հրապ, տուն Բենկլեան.
4) Արտեմ Նիկիտիչ Սէյլանօվ, վաճառական, Սիօնի փող, սեփ. տուն.
5) Գէօրգիյ Բօգդանօվիչ Տէր-Աստուրօվ, դիրեկտոր Թիֆլ. Կրեդ. Ընկ., Պուշկինսկայա փող. սեփ. տուն։
6) Իշխան Վասիլիյ Միխայլովիչ Թումանօվ, «Нов. Обозр.» նախկին խմբագիր, Բարեատինսկայա փող. սեփ. տուն.
7) Ներսէս Զախարիեվիչ Ումիկօվ, բժշկ., Գանօվսկայա փող. տուն Թումանօվի.
8) Եգօր Իվանովիչ Շաւլինօվ, ապահովագր. ընկ. գործակալ, Սերգէևսկայա փող. տուն Միրզօեվի։

Եօթներորդ քաղաքամասում

1) Հասան-Ջալալեան Ջամշուդ բէգ, Կախեթինսկայա, սեփական տուն.
2) Նախշունեան Գրիգոր Աստուածատրեան, երկրորդ գիլդի վաճառական, Բօզօվայա հրապարակ. սեփ. տուն.
3) Մելիք-Այվազեան Աղասի Առաքելեան, Կուբինսկայա, սեփ. տ.
4) Փօրակօվ Դաւիդ Իլլարիօնօվիչ, 2-րդ գիլդի վաճառական, Մետեխի փող. սեփ. տ.
5) Փօրակօվ Սիմեօն Իլլարիօնօվիչ, 2-րդ գիլդի վաճառական, Մետեխի փ. սեփ. տ.
6) Խալաթեան Նիկօլայ Դաւիդօվիչ, վաճառական, Էսաանայա, սեփ. տ.
7) Կվեզրելի-Կոպաձէ Իվան Նիկօլաևիչ, 2-րդ գիլդի վաճ., Կախեթինսկ., սեփ. տ.
8) Կվեզրելի-Կոպաձէ Գէօրգի Նիկօլաևիչ, 2-րդ գիլդի վաճ., Կախեթինսկ., սեփ. տ.
9) Բարսեղեան Սեդրակ Արութիւնովիչ, տեխնիկ, Ցիցիանօվսկայա, սեփ. տ.
10) Աշուղբաբեան Ստեփան Արտեմիևիչ, Մետեխի փող. № 20.
11) Տէրտէրեան Սեդրակ Տէյմուրազօվիչ, Կախեթինսկայա սեփ. տուն։
12) Տէր-Դաւիթեան Գէօրգի Զախարօվիչ, պաշտօնեայ կրեդիտի ընկերութեան մէջ, Լազարեվսկայա սեփ. տուն.
13) Մայսուրաձէ Եվստաֆի Սօլօմօնօվիչ, վաճառական, Կապտերօվսկայա սեփ. տուն.
14) Ղազարեան Միխայիլ Եգօրօվիչ, հաշուապահ, Սուրբ-Նշանի փող., սեփ. տուն։
15) Եղիազարեան Իվան Նիկիտիչ, բժիշկ, Վելիամինօվսկայա, № 6.

Իններորդ քաղաքամասում

1) Կօնստանդին Իվանօվիչ Գգելիև, բժիշկ Ելիզավետինսկ. փող., № 7.
2) Մօիսէյ Նիկիտօվիչ Մովսիսեան, բժիշկ, Ելիզավետինսկ. փող., № 21.
3) Վասիլիյ Գուրիևիչ Պալօվ, քարոզիչ քաթոլիկ., Րէուտօվսկ. փող., № 20.
4) Իրակլիյ Եվստաֆիևիչ Պուրցելաձէ, ագենտ քաղաք. վարչ., Ելիզավետ. փող., № 43.
5) Ալէկսէյ Սէմեօնօվիչ Սէմիգալօվ, ազատ նկարիչ, Րէուտօվսկ. փող., № 35.
6) Իվան Ֆելիկսօվիչ Թխարժևսկի, մասն. հաւատ., Նիկօլաևսկ. փող. 45.
7) Վասիլիյ Ալէքսանդրօվիչ Սուլխանօվ, կօնտրօլ Թիֆլ. ազն. հող. բանկ. Րէուտօվսկ. փող., № 8.
8) Սիլիչ Իվանօվիչ Թաւարբէգեան, մանկա[illegible]
9) Մկրտիչ Արուտինօվիչ Տէր-Մարգարեան, վաճառական, Ելիզավետինսկ., № 66.
10) Իլիա Իվանօվիչ Ցինամզգարօվ, նոտար, Ելիզավետինսկ. № 74.
11) Լևան Լևանօվիչ Իշխ. Չերքեզօվ, ծառայող Թիֆ. ազն. հող. բանկի, Ալէկսէեվսկ. փող., № 6, սեփ. տուն.
12) Իվան Արտէմիևիչ Շահբազեան, ագրօնօմ, Ելիզավետինսկ. փող., № 49, սեփ. տուն։

Տասներորդ քաղաքամասում

1) Բիլֆելդ Լէօպօլդ Պետրօվիչ, արխիտեկտ., Կիրօչնի փող. № 14.
2) Վոլֆ Նիկօլայ Կասպարօվիչ ապահովագր. ընկերութ. տեսուչ, Միքայէլեան փող. № 172.
3) Գարսօեվ Իվան Գերասիմօվիչ ինժ. տեխնոլօգ, Կանիևսկայա փող. № 5.
4) Զօնիկօվ Պավել Մարկէևիչ, տանտէր, Գրօզնենսկի փող. № 7։
5) Մակարօվ Կօնստանդին Դիմիտրիևիչ, տանտէր, Մօլօկանսկի փող. № 6։
6) Մուխարինսկիյ Սաուլ Աբրամօվիչ. ինժեն. Վօկզալնի փող. № 6։
7) Օստրօգօրսկիյ Նիկօլայ Նիկօլաևիչ, քաղաքային խորհրդի ձայնաւոր, Նիկօլայեվսկի փող. սեփ. տուն.
8) Փիրումօվ Սերգէյ Պավլօվիչ, տեխնիկ, Միքայէլեան փող. № 117։
9) Սամօղուրօվ Իվան Պանֆիլօվիչ, հանքագործ, Աբաստումանսկի փող. Սօսինի գործարան։
10) Թամամշեվ Գէօրգիյ Իվանօվիչ բժիշկ, Միքայէլ. փող. № 97։
11) Ֆիֆելօվ Տիտ. Ալէքսէևիչ քաղաքային դումայի ձայնաւոր, Աւճալեան փող. № 77։
12) Էմինօվ Դաւիթ Իվանօվիչ. բնագիտ. գիտութիւնների կանդիդ. Միքայէլեան փող. № 142

2—3

ԴՐՕՇԱԿԻ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ

I

Համախմբվեցէք, կազմակերպվեցէք, մասնակցեցէք ընտրութիւններին և ուրիշ հասարակական գործերին, բայց մի մոռացէք, որ մենք գործում ենք վեհ նպատակների համար, որ մենք պէտք է մտածենք ոչ միայն ներկայ բօպէի, այլ և յետագայ բօպէների համար։

Ոչ միայն այսօրվայ, այլ և վաղվայ համար։

Թէ ընտրական և թէ միւս հասարակական մեր գործունէութիւնների ժամանակ մենք երբէք չը պէտք է մոռանանք ժողովրդի քաղաքական և հասարակական դաստիարակութեան հարցը։

Ընտրութիւնը միայն այն ժամանակ կը դառնայ կեանքի գործօն և պատկառելի մի ույժ, եթէ պահպանված կը լինի այն վեհութիւնը և սրբութիւնը, որոնք պատկանում են նրան ըստ էութեան։

Եթէ ընտրութիւնը պէտք է տայ ժողովրդի ձայնի արտայայտութիւնը և նրա ներկայացուցչութիւնը, անհրաժեշտ է, որ ամէն միջոց գործ դրված լինի այդ արտայայտութիւնը և ներկայացուցչութիւնը հարազատ և ճշգրիտ դարձնելու։

II

Մեզ համար տանջանք է կարդալ և ականատես լինել, թէ ինչպէս խարդախութիւններ և բռնութիւններ են կատարվում ընտրողների ձայները որսալու համար։

Միթէ ընտրող ժողովրդի աչքում յարգանք կը մնայ դէպի ընտրական գործը և հասարակական գործողները, երբ այդ ժողովուրդը տեսնում է, որ ընտրական գործի մէջ մտցրած է ամենաստոր մրցութեան սիստեմ և ներելի են համարվում ամէն տեսակ գործողութիւններ որոշ արդիւնք ստանալու համար։

Ընտրական պայքարը, ճիշտ է, առաջ է մղում ամենաեռանդուն մրցութիւն, բայց այդ մրցութիւնը պէտք է չը դիմէ այնպիսի միջոցների, որոնցով անարգվում է ինքը՝ գործը։

Դժբաղդաբար՝ մեր կեանքի վերջին երկու տարիների փաստերը ցոյց են տալիս, որ աջողութեան համար մեր երկրի գործող խմբերի մի մասը ոչ մի խտրութիւն չէ դնում միջոցների մէջ և չէ խնայում իր դրօշակի պատիւը։

III

Քաղաքացիներ, մաքուր պահեցէք այն դրօշակը, որի անունով դուք գործում էք և խուսափեցէք այն բոլոր արարքներից, որո՛նք կարող են արատաւորել նրան։

Մեզ հարկաւոր է աջողութիւն, բայց մաքուր և ուղիղ ճանապարհներով։

Մենք պէտք է տեղ գրաւենք հասարակական կեանքում, բայց միայն ազնիւ և սուրբ գործունէութեամբ։

Իսկ եթէ աջողութիւն և տեղ գրաւելու համար մենք կը զոհենք ազնւութիւնը և մեր գործածած միջոցների մէջ չենք դնի խտրութիւն, այն ժամանակ մեր արտաքին յաղթութեան օրը մենք ստորագրած կը լինենք մեր բարոյական ներքին պարտութեան դատավճիռը։

Պէտք է դրօշակը մաքուր լինի, որ[illegible] կարողանան պարծենալ նրանով։ Պէտք է դրօշակի հետ կապված լինեն գաղափարի սրբութիւն և անարատ գործունէութիւն, որպէսզի մարդիկ խմբվելով նրա շուրջը՝ բիւրեղանան, ոգևորվեն և գործեն կատարեալ անձնուիրութեամբ։

IV

Ենթադրենք մի բօպէ, որ դուք զանազան ստոր ու կասկածելի միջոցներով աջողութիւն ունեցաք, բռնութիւններով, սպառնալիքներով տեղեր գրաւեցիք, դիրքեր հաստատեցիք, ներկայացուցիչներ ձեռք բերիք. յետոյ, ի՞նչ պէտք է անէք, երբ ամէն անգամ պէտք է ձեր երեսովը տան ձեր արարքները։

Ի՞նչ բարոյական ույժ կունենայ ձեր ձայնը հասարակական ասպարէզում։ Ինչպէ՞ս դուք կը բողոքէք կեղծիքների և զեղծումների դէմ, երբ դուք ինքներդ կեղծիքներով էք՝ գործեր վարել կեանքի մէջ։

Մաքրվեցէք, որպէսզի ուժեղ լինի այն գործը, որը դուք պէտք է պաշտպանէք։ Խուսափեցէք ամէն կասկածելի միջոցից, որպէսզի կատարեալ համարձակութեամբ դուք հանդէս եկնէք մտրակելու չարահոգի գործողներին։ Բծախնդիր եղէք դէպի ձեզ, որպէսզի կարողանաք պահանջող լինել դէպի ուրիշները և դատապարտել նրանց զազիր գործերը։

V

Ոչ մի կուսակցութիւն, որքան էլ որ նա ստուար լինի, չէ կարող խուսափել անկումից, եթէ նա չը կարողանայ պահպանել գաղափարական մաքրութիւնը։

Ոչ թէ կուսակցութիւններ, այլ ամբողջ կառավարութիւններ տապալվում են և գլորվում են, երբ նրանց մէջ շինարար գաղափարը տեղի է տալիս արտաքին փայլին և րօպէական աջողութեան դրդումներին։

Իսկ երբ կայ գաղափարական ույժ, բարոյական վեհութիւն, այն ժամանակ այսօրվայ փոքրիկ կազմակերպութիւնը սկսում է բռնել իր վրա մարդկանց ուշադրութիւնը, կամաց-կամաց ամրանում է և դառնում է հասարակական գործօն։

Ով դաւաճանում է գաղափարին, գաղափարն էլ դաւաճանում է նրան և պատժում ճակատագրական տրամաբանութեամբ։ Մենք միայն մի ճանապարհ ունենք մեր առաջ—մաքուր պահել դրօշակը և ազատ՝ արատաւորումից գործելով շիտակութեամբ և անձնուիրութեամբ։

Այն ժամանակ ինքը դրօշակը կը պսակէ իր անխուսափելի յաղթանակները։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակ, 25 յունվարի

Ամսիս 23-ին, մի քանի անյայտ մարդկանց ձեռքով քաղաքիս կենտրոնական փողոցում հայոց եկեղեցու հանդէպ սպանվեց ժանդարմիական վարչութեան խուզարկու Լօլաձէն. մահացու կերպով վիրաւորվեց իր պահապան ինգուշը, իսկ հայ ոստիկան Պետրոսը, չը նայած որ մի քանի գնդակ է ստացել, բայց անվնաս է անցել։ Ի միջի այլոց սպանվեց Թուրք կառապանը և վիրաւորվեց մի ուրիշ Թուրք կառապան։

Թուրք կառապանի սպանման լուրը երբ որ հասնում է Թուրքաց Թաղը, քիչ է մնում, որ խախտվի Թուրք-հայկական յարաբերութիւնը։ Թուրքաց մասում գըտնըվող հայերի առաջ կտրում են և Թոյլ չեն տալիս գալու պատասխանելով Թէ մեր Թուրքին սպանել էք, պէտք է վրէժը լուծենք։

Շնորհիւ մի քանի կողմնակի մարդկանց միջամտութեան, դէպքը լուրջ հետևանք չէ ունենում։

Սպանութեան վայրը խիստ շրջապատւում են զօրքով. մի ժամվայ չափ քըննութիւն և խուզարկութիւններ կատարելուց և երկու մարդ ձերբակալելուց յետոյ, հեռանում են։

Ձերբակալվածներից Ա. Նեգեանը, որի խանութի առաջ սպանված ընկած է Լօլաձէն, ազատվում է միւս օրը բանտարկութիւնից, շնորհիւ գեներալ Ֆլէյշերի կնոջ վկայութեան. բարեբախտաբար այդ կին սպանութեան ժամանակ, Ա. Նեգեանի խանութում իրեր է գնելիս եղել, Թէ չէ Նեգեանների բանը բուրդ էր։

Միևնոյն գիշերը ձերբակալեցին երդուեալ-հաւատարմատար Ն. Բաբաջանեանին, Ա. Մելիք-Շահնազարեանին, Միքայէլ Սթեփանեանին և Լևոն Մելիք-Մնացականեանին. իսկ 25-ին սկսեցին խուզարկութիւններ սպանութեան վայրում գտնվող խանութպաններին և ձերբակալելով մօտաւորապէս 40 մարդ, ուղղակի բանտ ուղարկեցին։ Ինչպէս լսում ենք, գեներալ նահանգապետը տուգանքի է ենթարկում Գանձակի հասարակութիւնը։

Վ.

Մենք ստացանք հետևեալ գրութիւնը Շամշադին ուղարկված նպաստների մասին։

Շամշադինի ժողովուրդը ստացել է Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովից երկու հազար րուբլի (2000 ր.) կարկուտից վնասվածների օգտին բաժանելու։

Նախկին հայ-Թուրքական կոտորածի պատճառով Թուրքերը հացի գինը զգալի չափով բարձրացրել էին։ Այդ պատճառով ժողովը որոշեց ժամանակաւորապէս այդ փողով հաց մտցնել Շամշադին։ Դրա համար ընտրեց Մատթէոս Մելիք-Մաթէոսեանցին, Յակոբ Ապրեսեանցին և Յարութիւն Ղուկասեանցին՝ որոնք մինչև օրս հոգացել են այդ մասին։

Այսօր, 1907 Թւի յունվարի 10-ին, մենք բոլոր գիւղերի ներկայացուցիչներս (համախօսականներով) հաւաքվեցինք Բերդ [illegible] ժողովի գործերը քննելու։ Հաշուից երևաց, որ ստացել են երկու հազար րուբլու հաց, «Զանգի» խմբագրութիւնից հարիւր եօԹանասուն և հինգ րուբլի (175 ր.), Ղազախից երկու հարիւր րուբլի (200 ր.) և վերջին ժամանակ դարձեալ Նպաստամատոյց Յանձնաժողովից չորս վագոն ցորեն, որի համար (վերջինիս) նոյնպէս ստացել են երեք հարիւր յիսուն րուբլի (350 ր.) երկաթուղու վագոնների ծախսը լրացնելու և բացի դրանից հացի քանակութեան երկու երրորդ ($^2/_3$) մասը ծախել են չքաւորներին էժան գնով, դարձեալ ծախքերը լրացնելու։ Հաշուից երևաց, որ առձեռն նաղդ փող մնացել է մէկ հազար երկու հարիւր քսան մէկ րուբլի (1221), իսկ մնացածը բաժանվել է ժողովրդին։

Գիւղերի ներկայացուցիչներ
18 ստորագրութիւն

Թէհրան, 24 յունվար

Ստորագրված է այն մենաշնորհը, որի համաձայն ազգային բանկ է հիմնվելու 18 միլիոն Թուման դրամագլխով։ Օտարազգիներին արգելվում է մասնակցել. բանկը կառավարութեան անունից ժողովելու է պետական եկամուտները և վճարելու է պետական ծախքերը։ Լուրերին նայած, բանկը կառավարութեան հետ համաձայնութիւն է կապել, որի ույժով կառավարութիւնը բանկում պահելու է 2 միլիոն Թուման 9 0/0-ով։ Բանկի մասին հրատարակված կանոնադրութեան լրացուցիչ յօդուածը ասում է, որ մենաշնորհը կորցնում է իր ույժը, եթէ բանկը կը ժողովէ պահանջված դրամագլուխը։

(Հ. Գ.)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Երէկ, յունվարի 26-ին խմբագրութիւնս Նոր-Բայազէթից ստացաւ հետևեալ հեռագիրը. «Քաղաքը պատուիրակ ընտրեց նախկին քաղաքագլուխ Արծրունուն, որ Հայ Դեմօկրատական կուսակցութեան կողմնակիցներից մէկն է»։

Սիմոնեան

Ղազախից ստացանք հետևեալ հեռագիրը. Ղազախ, 26 յունվարի. 1 ժամ 30 րօպ. ցեր.։ Այսօր գիւղական հասարակութիւններից ընտրվեցին անկուսակցական պատուիրակներ երեք գիւղացի մահմեդական և մէկ հայ։

Դուլեան

Քաղաքային վարչութիւնը ոստիկանատներն էր ուղարկել 34,644 ծրարներ անուանական յայտարարութիւններով և ընտրողական Թերթիկների բլանկներով՝ քաղաքային ընտրողներին յանձնելու համար։ Մինչև յունվարի 25-ը ծրարների այդ Թւից բոլոր ոստիկանատները միասին քաղաքային վարչութեան վերադարձրել են 11,605 ծրարներ, որոնք հասցէատէրերին չեն յանձնել կամ նըրանց մահվան, կամ հասցէների սխալ, կամ չը գտնելու, կամ Թէ Թիֆլիսից մեկնելու պատճառով։ 1-ին ոստիկանական Թաղամասը վարչութիւնը ուղարկել էր 4508 ծրարներ անուանական յայտարարութիւններով և ընտրողական Թերթիկներով, իսկ այդ բոլորից վերադարձրած է 1615 ծրար, 2-րդ քաղաքամասի ոստիկանատուն ուղարկված է 1343 ծրարներ, վերադարձրած են 386 ծրար. 3-րդ ոստիկանատուն ուղարկված է եղել 1910 ծրարներ, վերադարձրել են 932-ը. 4-րդ ոստիկանատուն ուղարկված է եղել 1878 ծրար, վերադարձրել են 595-ը. 5-րդ քաղաքամասի ոստիկանատուն ուղարկված է եղել 3463 ծրարներ, վերադարձրած է 1141 ծրար. 6-րդ քաղաքամասի ոստիկանատուն ուղարկված է եղել 1763 ծրար, վերադարձրել են 850 ծր. 7-րդ քաղաքամասի ոստիկանատուն ուղարկված է եղել 6082 ծրարներ, վերադարձրել են 2025 ծր. 8-րդ ոստիկանատուն ուղարկված է եղել 1768 ծրարներ, վերադարձված է 340 ծր. 9-րդ ոստիկանատուն ուղարկված է 3987 ծր., վերադարձրել են 103 ծր. և 10-րդ ոստիկանատուն ուղարկված է եղել 7645 ծրարներ, վերադարձրել են 3618 ծրարներ։

Յունվարի 24-ին, կովկասեան բժըշկական ընկերութեան շինութեան մէջ կայացել է Թիֆլիս քաղաքի 10-րդ Թաղամասի առաջադէմ ընտրողների նախընտրական ժողովը՝ այդ Թաղամասի կողմից պատուիրակութեան համար Թեկնածուներ որոշելու նպատակով։ Ժողովը մատնանշել է հետևեալ մարդկանց. Վիլֆէլդ Լէօպ. Պետր. (արխիտեկտոր), Վոլֆ Նիկ. Կասպ. (ապահովագրական ընկերութեան տեսուչ), Գարսօէվ Իվ. Գէր. (ինժեներ-տեխնոլոգ), Զօրնիկով Պաւլ. Մարկ. (տանտէր), Մակարով Կօնստ. Դմ. (տանտէր), Մուխայինսկի Ստաւլ Աբր. (ինժեներ), Օստրօգօրսկի Նիկ. Նիկ. (Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր), Փիրումով Սերգ. Պաւլ. (տեխնիկ), Սամօգուրով Իվ. Պամֆ (լեռնահանքատէր), Թամամշէվ Գէօրգ Իվ. (բժիշկ), Ֆէֆէլով Ցիտ. Ալեքս. (Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր). Եսինով Դաւ. Իվ. (բնագիտութեան Թեկնածու)։

Ինչպէս հաղորդում են, Բաթումում հնչակեանները բլոկ են կազմել սօցիալ-դեմոկրատների հետ։

«Իսարի» լրագրի ասելով, Քութայիսի նահանգում ընտրվել են 38 պատուիրակներ, որոնցից յամենայն դէպս 25—27-ը պատկանում են սօցիալ-դեմոկրատական կուսակցութեան։

Երևանում պատուիրակներ ընտրվել են Գալուստ Ալօեանց, քաղաքային հիւանդանոցի վերատեսուչ, բժիշկ Յովհաննէս Գր. Յովհաննիսեանց և Մակուի Փանահ խանը, քաղաքային դումայի ձայնաւոր։

Պիատիգօրսկում պատուիրակ է ընտրվել յայտնի բժիշկ Գորբունօվը։

Սօչու վիճակի Թաղական ժողովների լիազօրների համագումարին պատուիրակ է ընտրվել Ն. Ն. Նիկիտին, 42 տարեկան, ռուս, գիւղատնտես, Թերուս. յայտնել է իրան անկուսակցական, սակայն նա պատկանում է ծայրահեղ ձախակողմեաններին։

Սօչու վիճակի հողատէրերի համագումարին պատուիրակ է ընտրվել կալուածքների կառավարիչ Գ. Ֆ. Ուսպէնսկին, 60 տարեկան։

Գօրու գաւառում արդիւնաբերական հաստատութիւնների բանւորների լիազօրների ընտրութիւններին ընտրվել են. Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայէվիչի Բօրժոմի կալուածքի հանքային ջրերի գործարանում—Իսիդոր Իսաակովիչ Կորդզիա—ազնուական, Բօրժոմի բնակիչ, 30 տարեկան՝ Սերգէյ Իօսիֆովիչ Բլիաձէ,—Գօրու գաւառի գիւղացի, 25 տարեկան, և եղբ. Մալիշեվների ապակու գործարանում, Վասիլի Պետրովիչ Սամսոնիձէ, Ախալցխայի բնակիչ, 36 տարեկան։

Տուապսէի վիճակի ժողովների լիազօրների համաժողովին պատուիրակ ընտրվել է Ի. Ի. Կօլէսնիկօվը—52 տ. շինական դատաւորի Թեկնածու, ռուս, հողագործ, անգրագէտ, անկուսակցական։

Տուապսէի վիճակի գաւառական հողատէրերի համագումարին պատուիրակ է ընտրվել Դ. Գ. Ռօգալիօն-Սօշալսկին—44 տարեկան, ռուս, գաղթավարական վարչութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ, Պետերբուրգի համալսարանի իրաւունքների Թեկնածու, գաւառական պատուաւոր հաշտարար դատաւոր, ձայնաւոր, անկուսակցական։

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Բագուի ճիւղը՝ ինչպէս յայտնել ենք նախորդ համարում, քաղաքի II, IV, V և VI Թաղամասի համար դրել է իր սեփական Թեկնածուները, իսկ I և III Թաղամասում բլոկ է կազմել «Հող և ազատութիւն» կուսակցութեան հետ։

Յիշեալ Թեկնածուների շարքում մահմեդականներ կան հետևեալ անձինք և հետևեալ Թւով. I Թաղամասում, 16 Թեկնածուներից մահմեդական են. 1) Ախունդով Բահրամ բէգ Հաքիմ, 2) Հաշումով աղա Քեազիմ, 3) Մուսթաֆա բէգ Հաջինսկի, 4) Կանի Մահմէդով, 5) Իսկանդար բէգ Մելիքով, 6) Մեհդիև, 7) Միքայիլով Միրզա Եուսուֆ, 8) Սաֆար Ալիև։

II Թաղամասում, 16 Թեկնածուներից մահմեդական են. 1) Իսանդար բէգ Ախունդով, 2) Իբրահիմ բէգ Աշուրբէգով, 3) Մեհդի բէգ Հաջի Բաբաբէգով, 4) Մահմէդ Հասան Հաջինսկի, 5) Հաբիբ բէգ Մահմուդբէգով, 6) Ֆաթուլլահ բէգ Ռուստամբէգով, 7) Մահմէդ Ալի բէգ Սէյիդբէգով, 8) Աբդուլ Կադեր Էֆենդիև։

III Թաղամասում, 17 Թեկնածուներից մահմեդական են. 1) Իսա բէգ Հաջինսկի, 2) Ալի Աշրաֆ Քէրիմով։

IV, V և VI Թաղամասերում, և ոչ մի մահմեդական Թեկնածու չը կայ։

Ամսիս 23-ին Վլադիկավկազի երկաթուղով Բագու են ժամանել փորտ Ալեքսանդրովսկիում, Մանկըշլակ գաւառի Պետական Դումայի համար պատգամաւորներ ընտրող պատուիրակները։ Նրանք նոյն օրը երեկոյեան պէտք է «Կավկազ-Մերկուրի» ընկերութեան «Կուրօպատկին» շոգենաւով գնային Աստրախան։ Նրանք Թւով 8-ն են, որոնցից մինը՝ Զալմա Նիազ Սաֆար Ավօրիչ Նաֆաևը Մանկըշլակի և Աստրախանի Թիւրքմէն հասարակութեան ներկայացուցիչն է։ Մնացեալ եօԹ պատուիրակները ընտրված են ղըրղըզների կողմից. 1) Հաջի Բուրանկուլ Թէյէկին օղլի, 2) Հաջի Կարուլ Մանդըկ օղլի, 3) Աբդուլ Խալիկ Ջանկարուլ օղլի, 4) Զաթիւս Հաջի Թարա օղլի, 5) Այուլ Դիմոնսան Բայ օղլի, 6) Զալմա Սադրադ Բայ օղլի, 7) Թօբա Նիազ Ալի Նիազ օղլի։

Սօցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը մատնանշել է հետևեալ Թեկնածուներին Թիֆլիսի քաղաքի կողմից պատուիրակութեան համար 1-ին քաղաքամասում—Ս. Ն. Ուշակով, Պ. Պ. Գելէյշվիլի, Ի. Ա. Գարսէվանով, Ի. Կ. Ճապարիձէ, Ա. Ս. Կալանդաձէ, Գ. Ֆ. Մախարաձէ, Կ. Ե. Նինիձէ, Ա. Դ. Նիկողայոսեան և Բ. Ա. Թորոսեան։

2-րդ քաղաքամասում, Ս. Ի. Վօտոչկօրեա, Վ. Ի. Ցիվցիվաձէ և Վ. Ի. Նատաձէ։

3-րդ քաղաքամասում. Ս. Ա. Բաշինջեան, Դ. Գ. Ճավախով և Ա. Վ. Տաւտիշվիլի։

4-րդ քաղաքամասում. Ե. Մ. Յակոբեան, Մ. Զ. Վարդիմով, Ս. Դ. Զուրաբով, Գ. Ի. Կալլենսկի, Գ. Գ. Կաֆիէվ, Ա. Ի. Կանդալեչէվ, Ի. Գ. Կիրկաշվիլի, Կ. Ա. Սաղիրաշվիլի և Գ. Ս. Տէր-Հանեան։

5-րդ քաղաքամասում, Ս. Գ. Ամբարդանով, Ղ. Ս. Ազայեան, Ա. Ե. Բախանով, Ի. Զ. Բէտխանիձէ, Ա. Կ. Գրիկուրով, Զ. Ս. Զալինով, Գ. Ս. Զուկակով և Օ. Տ. Կարապետեան։

6-րդ Թաղամասում. Ֆայիկ-էֆենդի-Նէյմաև զադէ, Ն. Ս. Տօտիբաձէ, Դ. Ի. Վարդանեան և Մաշադի-Մամէդ-Հասան-Ալակպէր-օղլի։

7-րդ Թաղամասում. Գ. Տ. Ալաւիձէ, [illegible] Շ. Կուրդիշվիլի, Ի. Գ. Մանջավիձէ, Խ. Մ. Մարգարեան, Ն. Պ. Մէգէբրիշվիլի, Գ. Օ. Յովակիմեան, Ս. Գ. Սարուխանով, Ե. Դ. Սեմխօվիչ, Զ. Ի. Սոխաշվիլի, Պ. Գ. Տէր-Սիմէօնեան, Դ. Ի. Զուալաշվիլի, Ա. Ե. Շիխեանց և Լ. Բ. Եաղուբեանց։

8-րդ քաղաքամասում. Դ. Ի. Աբաշիձէ, Ե. Ֆ. Բօրօսեն, Վ. Գ. Օնեկաձէ, Մ. Մ. Սամադուրով և Ն. Գ. Տէր-Սարգսեան։

9-րդ քաղաքամասում. Կ. Վ. Վէրմիշենկօ, Վ. Գ. Ախմէդէլօվ, Գ. Կ. Գուլուա, Ի. Մ. Գոնենաշվիլի, Վ. Մ. Բէլանով, Ե. Գ. Կավտարաձէ, Ի. Ա. Լօմաուրի, Ի. Ի. Մոչավարեանի, Լ. Գ. Գազլօէվ և Ն. Վ. Ռամիշվիլի։

10-րդ քաղաքամասում. Մ. Ի. Հօրբինաձէ, Ի. Գ. Դուրգլվելի, Ֆ. Պ. Զօլնիկով, Վ. Կ. Մախարաձէ, Ի. Դ. Մակէզօնսկի, Ս. Ա. Մեգրէլիշվիլի, Ա. Պ. Նարիմանով, Ս. Գ. Շահումեան, Վ. Բ Զաքուկեանի և Գ. Պ Երաձէ։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՕՐԷՕԼ, 24 յունվարի, Ելեցկու գաւառի հողատէրերի կողմից պատուիրակ ընտրվել է Միխայիլ Ստախովիչը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունվարի։ Մինչև յունվարի 23-ը, շրջանային ժողովների, բանւորների և մանր հողատէրերի լիազօրների ընտրութիւններին ընտրվել են ընդամենը 21,180 լիազօրներ, որոնցից 5346-ը միապետականներ են և սրանց յարողներից, 8777-ը—չափաւորներ, մնացած 7157 լիազօրների մէջ 686-ը կադէտներ են և սրանց յարվածներ։ Մանր հողատէրերի լիազօրների 8252 Թւից 2987-ը քահանաներ են։

ՄՕՍԿՎԱ, 25 յունվ.։ Մի քանի հոկտեմբերականներ բողոքել են Մօսկվայի գաւառի քաղաքային ընտրողների ընտրութիւնների դէմ, պատճառաբանելով, որ նրանց վրա ճընշում են գործ դրել քաղաքային վարչութեան ծառայողները, որոնք բաժանել են սահմանադիր-ռամկավարների Թեկնածուների անուանացուցակները։

ՈՒՂՂՈՒՄՆ։ Յունվարի 22-ին տպած հեռագրի մէջ սխալ է սպրդել. ասված էր, որ Պետական Դումայի Նախկին անդամ կոմս Հէյդէնը սևացել է Օպոչէցկու գաւառի հողատէրերի համագումարին։ Իրողութիւնն այն է, որ կոմս Հէյդէնը սևացել է Օպօչկում քաղաքային ընտրողների համագումարին. իսկ հողատէրերի համագումարին ընտրվել է պատուիրակ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Մինչև յունվարի 25-ը շրջանների, գմինների, հողատէրերի, քաղաքային ընտրողների և բանւորների լիազօրների ընտրութիւններին ընտրված 2336 պատուիրակներից 559-ը միապետականներ են, որոնցից 14-ը ռուս մարդկանց դաշնակցութիւնից, 251-ը՝ միապետականներ, 127-ը՝ աջակողմեաններ, 167-ը անկուսակցական աջակողմեաններ, 414-ը՝ չափաւորականներ, որոնցից 7-ը օրինակարգի կուսակցութիւնից են, 231-ը հոկտեմբերականներ, 24-ը՝ սրանց յարվողներ, 79-ը՝ չափաւորականներ, 2 հոգի առևտրա-արդիւնաբերական կուսակցութիւնից, 16 հոգի կենտրոնից, 5 հոգի սահմանադիր-միապետականներից, 35 հոգի անկուսակցական չափաւորականներ, 15-ը՝ չափաւոր աջակողմեաններ, 870-ը ձախակողմեաններ, որոնցից 10 հոգին—խաղաղ-վերանորոգչականներ, 8-ը սրանց կողմնակիցներ, 6 հոգին դեմօկրատական բարենորոգումների կուսակցութիւնից, 3 հոգի դեմօկրատներ, 132-ը առաջադիմականներ, 239-ը կադէտներ, սրանց յարվողները—74 հոգի, 5 հոգի կադէտներից ձախակողմեան, 25 հոգի աշխատաւորականներ, 6 հոգի աշխատաւորների բլոկից, 4 հոգի գիւղացիական դաշնակցութիւնից, 6 հոգի ժողովրդա-սօցիալիստական կուսակցութիւնից, 45 հոգի սօցիալ-դեմօկրատներ, 8 հոգի սօցիալ-յեղափոխականներ։ 167 հոգի ձախակողմեաններ, անկուսակցական ձախակողմեաններ—47 հոգի, 41 հոգի լեհական նացիօնալիստներ, 1 կաթօլիկ սահմանադրական, 6 առաջադէմ էստօնցիներ, 56 սիօնիստ-սօցիալիստներ, 5 բունդիստներ, 230 հոգին—անկուսակցականներ, 146 հոգին յայտնի չէ, Թէ կուսակցութեանն են պատկանում։

Ըստ կուրիաների պատուիրակները ստորաբաժանվում են այսպէս. շրջանների և գմինների դատարանների լիազօրների համագումարների պատուիրակների Թիւը 1070 է, որոնցից չափաւոր միապետականներն են 439 հոգի կամ 40,8°/0 ձախակողմեաններ 358 հոգի կամ 33,3տ. ազգային կուսակցութիւններին պատկանող 44 հոգի—կամ 4,1 տոկոս, անկուսակցականներ 159 հոգի կամ 14,8 տոկոս անյայտներ 75 հոգի կամ 7 տոկոս։

Հողատէրերի համագումարին ընտրված պատուիրակների Թիւը 654-է, որոնցից միապետականներ և չափաւորականներ՝ 425 հոգի կամ 65 տոկոս, ձախակողմեաններ՝ 125 հոգի կամ 19 տոկոս. սրանց մէջ ոչ աշխատաւորականներ, ոչ սօցիալ-դեմօկրատներ կան, կամ սօց. յեղ., ազգայիններ 33 հոգի կամ 5 տոկոս, անկուսակցականներ 33 հոգի կամ 5 տոկոս, անյայտ կուսակցութիւնների պատկանող 39 հոգի կամ 6 տոկոս։

Քաղաքային ընտրողների համագումարին ընտրված պատուիրակների Թիւը հասնում է 588-ի, որոնցից միապետականներ և չափաւորականներ—106 հոգի կամ 18 տոկոս, ձախակողմեաններ՝ 374 հոգի կամ 63,5 տոկոս. սրանց մէջ կադէտների և սրանց կողմնակիցների Թիւը 217—է, սօցիալ-դեմօկրատներ 21 հոգի, սօցիալ-յեղափոխականներ—5 հոգի. ազգային կուսակցութիւններից 39 հոգի կամ 6,6 տոկոս, որոնցից 16-ը սիօնիստներ են, սօցիալիստներ, 5-ը, բունդիստներ, անկուսակցականներ 37 հոգի կամ 6,2 տոկոս անյայտներ 32 հոգի կամ 5,5 տոկոս։

Բանւորների պատուիրակները 19 հոգի, որոնցից 17-ը ձախակողմեաններ են կամ 89,6 տոկոս, նացիօնալիստներ 1 հոգի կամ 5,2 տոկոս, անկուսակցականներ, 1 հոգի կամ 5,2 տոկոս։

ՄԱՄՈՒԼ

Յունվարի 18-ին մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի կողմից տեղական բարձր իշխանութիւններին՝ գեներալ-նահանգապետներին, քաղաքապետներին և Կովկասեան Փոխարքային ուղղած շրջաբերականի մէջ նախագծված է կառավարութեան ապագայ գործողութիւնների ծրագիրը, որտեղ մատնացոյց է արված, որ տեղական ադմինիստրացիայի «պարտականութիւնն է» պաշտպանել ընտրութիւնների լիակատար ազատութիւնը, արգելելով միայն այն փորձերը, որոնք հրապարակական ժողովները նպատակ կունենան ծառայեցնելու «յեղափոխական ագիտացիայի համար»։ Թէ իսկապէս ինչումն է կայանում այդ ծրագիրը, ինչ նպատակներ ու դիտաւորութիւններ ունի կառավարութիւնը նոր Դումայի գումարումից առաջ, ահա Թէ ինչ է ասում այդ մասին «Товарищъ» լրագիրը.

Այդ ծրագիրը «օգոստոսի 24-ի ծրագիրն է,—ասում է մինիստրների խորհրդի նախագահը—նրան կրկնելու կարիք չը կայ»։ Նա լաւ, չափազանց լաւ յայտնի է ամբողջ երկրին, այլ ոչ Թէ միայն նորին գերազանցութիւններին՝ գեներալ-նահանգապետներին ու քաղաքապետներին։ Այդ՝ նախ և առաջ զինւորական-դաշտային դատարանների ծրագիրն է, այդ՝ ազատութեան ամենաննշան արտայայտութիւնների եօթ ամսվայ սաստիկ ճնշումների ծրագիրն է. այդ այն ծրագիրն է, որ ոչնչով չէ սահմանափակում բիւրոկրատիայի ինքնիշխանութիւնը Թէ այստեղ կենտրոնում և Թէ գաւառներում զինւորական դրութիւնների, արտակարգ և սաստկացրած պահպանութիւնների տակ քողարկված։ Այդ ծրագիրն էր, որ ստեղծեց ներկայ ժողովրդական աղէտը—սովը, նրա հիման վրա հովանաւորվեցին նոյնպիսի քաղաքական կուսակցութիւններ, ինչպիսին է «ռուս ժողովրդի դաշնակցութիւնը» և հալածանքի ենթարկվեցին նոյնիսկ այնպիսի լեգալ կուսակցութիւններ, ինչպիսին է սահմանադիր ռամկավար կուսակցութիւնը։ Երեք դրանով ղեկավարվելով խեղաթիւրեցին սենատի մեկնութիւններով ընտրողական օրէնքը։ Վերջապէս այդ նոյն ծրագրով, հիմնական օրէնք. 87 րդ յօդուածի հիման վրա, կառավարութիւնը լուծեց ագրարական հարցը, մի այնպիսի խոշոր, տեղային հարցում դանց անելով ժողովրդական ներկայացուցչութեան կարծիքը, և այն էլ ինչպէս լուծեց. բացարձակ հովանաւորելով խոշոր հողատիրութեանը, Թանգ գներով վաճառելով ուդելնի և արքունապատկան հողերը, բռնի կերպով քայքայելով համայնքը ի նպաստ գիւղացիութեան աւելի ապահով մասի, տալով գիւղացիների հողային բարեկարգութեան գործը կալուածատէրերի, չինօվնիկների և զեմսկի նաչալնիկների ձեռքը։

Ահա այդ է օգոստոսի 24-ի ծրագիրը, որ մինիստրների խորհրդի նախագահը յիշեցնելով, ներկայումս անհրաժեշտ է համարում նրան զարգացնել ժամանակի պայմանների ու հանգամանքների համաձայն։ Այդտեղ նա խօսում է Դումայի հետ համերաշխ բեղմնաւոր աշխատանք կատարելու մասին, Դումայի օրէնսդրական, բիւջետային և հարցապնդումների վերաբերեալ իրաւունքներին յարգանք տածելու մասին, ապա յայտնում է և այն, որ չար դիտաւորութեամբ են հնարված այն լուրերը, որ իբր Թէ կառավարութիւնը հրաւիրում է Դուման նրան անպայման արձակելու նպատակով։

Այդ բոլորը,—ասում է լրագիրը,—շատ ախորժալուր է։ Բայց ռուս հասարակութիւնը ակամայից մտաբերում է առաջին Պետական Դուման։

Ապա նկարագրելով Թէ ինչպէս վարվեց կառավարութիւնը Պետական Դումայի հետ և ինչեր արեց նրա փակումից յետոյ, այս 6 ամսվայ ընթացքում, եզրափակում է հետևեալ խօսքերով.

Երկիրը «բեղմնաւոր աշխատանքի» կարօտութիւն ունի. այդ աշխատանքը արդարև հարկաւոր է, բայց որպէս զի նա հնարաւոր լինի նոր Դումայի համար, որպէսզի ժողովրդական ներկայացուցչութիւնը խաղաղ կերպով զբաղվի նրանով, իսկ հասարակութիւնն ու մամուլը ունենային քննադատութեան լայն իրաւունք, որ կարելի է համարում և Ստոլիպինը, նախ և առաջ պէտք է վերացվի օգոստոսի 24-ի ծրագիրը։

*

Առհասարակ հեռուից հեռու մարդիկ չափազանց տրամադիր են խաբվելու. մինչև իսկ կան մարդիկ որոնք խաբվելու մէջ առանձին հաճոյք էլ են զգում։ Խաբվելու տրամադրութիւնը, երազ յօյսերով ապրելու սովորութիւնը մանաւանդ մեր երիտասարդութեան մէջ մի տեսակ համաճարակ ախտ է դարձել, բացյայտ և անհերքելի ճշմարտութիւնները, մեր աչքի առաջ կանգնած մերկ, անգրաւիչ իրականութիւնն անգամ անզօր են լինում հիասթափեցնելու և ուշքի բերելու մեզ։ Այդ հանգամանքը առիթ է տալիս Մարսէլում հրատարակվող «Արմէնիա» լրագրին հետևեալ խորհրդածութիւններն անել.

Հարցուր Թիւրքահայաստանէն նոր եկողի մը երկրին վիճակը. բոլորովին յուսահատական ցոյց կուտայ քեզ (այս ալ ծայրայեղութեան մէկ կողմն է), ամենատխուր գոյներով նկարագրելով, այնպէս որ այդ դժոխքի մէջ ապրիլն ալ անկարելի դարձած լինելով ստիպուեր է ինքն գաղթել և եթէ դիւրութիւն լինի, ամենքն ալ պիտի ձգեն հեռանան։ Այդ մարդ կերթայ Ամերիկա. հոն կը լսէ ճառախօսութիւններ, որոնք կը պատմեն Թէ հայ զօրքերի մեծ խումբեր կը գտնուին Թիւրքահայաստանի մէջ, ուր մեծամեծ քաջութիւններով յաղթահարած են Թիւրք զօրքերին և ահ ու սարսափի մէջ կը պահեն Թիւրք կառավարութիւնը։ Եւ այդ մարդը, որ Հայաստանէն դեռ նոր եկած է, որ գիտէ ինչ վիճակի մէջ կը գտնուի երկիրը, որ ինք արդէն պատմած էր Թէ երիտասարդները հետզհետէ կը Թողուն, կը հեռանան և Թիւրք կառավարութեան դէմ ապստամբելու և կռուելու համար կը մնան հոն գրեթէ միայն պառաւներ և պառաւ կնիկներ, Ամերիկայի մէջ կսկսի հաւատալ իրեն հաճելի, բայց երևակայական պատմախօսութիւններին, քան Թէ նոյն իսկ իր աչքերով տեսածին և իր ճակատի դառն քրտինքով վաստակած դրամները կը յանձնէ Հայաստանի մէջ Թիւրք զօրաբանակներին դէմ կռուող հայ զօրքերին դրկելու համար։ Ալ աւելին կայ. բուն իսկ իր աչքով տեսածները մոռանալով, կրակոտ ուրիշներու աչքով տեսածները ինքն ալ իր կարգին պատմել իբրև ականատես, ոչ միայն իր յիշողութիւն կը կորսնցունէ և ինքզինք կը խաբէ հաճոյք մը զգալով խաբուելուն մէջ, այլ և ուրիշներն ալ խաբուելուն պատճառ կը դառնայ։

Ահա ցաւալի պատկերը մեր «յեղափոխական» իրականութեան։ Ամեն ինչ պատրանքի, ամեն ինչ բաղձութիւնների վրա է հիմնված... Խեղճ ժողովուրդ!

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բարսում գիւղ (Զանգ. գաւ.), յունվարի 15-ին.—Տարիների ընթացքում պարբերաբար կրկնվող անբերրիութիւնը և իրականութեան մէջ դերիշխող ժամանակակից քիասատութիւնը մեզ վարակում են յոռետեսութեամբ, որ եթէ աշխատանքի ու գործունէութեան դռները չը բացվեն գիւղացիութեան առաջ, եթէ հողատիրական պայմանների բարելաւումն չը մտցնվի՝ գիւղացու տնտեսական կեանքը անուղղելի փլման ու քայքայման է ենթարկվելու։

Գոյութիւն ունեցող հողատիրապետական կարգերով և առձեռն ունեցած հողի քանակութեամբ մեր գիւղացին երբեք չէ կարող կանոնաւորել իր տնտեսական կեանքը։ Հողի պարբերաբար մշակումն առանց հանգստացնելու և յաճախակի հողաբաժանման սովորութիւնները ոչ պակաս խոչընդոտներ են նրա տնտեսական պայմանների առաջադիմութեան։

Յիշեալ հանգամանքները մի կողմ Թողնենք, ծանրանանք աւելի գերակշռող պատճառների վրա։ Եթէ մի ակնարկ ձգենք գաւառիս հայկական գիւղօրայքի վրա, կը նկատենք, որ ամբողջ գիւղերը, բացառութեամբ մի երկուսի, Թառած կամ սփռված են բարձր լեռնաշղթաների կատարներին կամ լանջերին, որոնք իրենց խորթ ու բիրտ դրութեամբ միանգամայն անտանելի են։ Քննելով հողի որակութեան տեսակէտից և նկատելով նրա սևահողի բարակ շերտերից կազմուածքը, որից ներքև անմիջապէս խճաքար ու սալաքարերն են արմատացած, գալիս էք այն եզրակացութեան, որ մեր գիւղօրայքը, մէկը միւսից սակաւ բարեբերութեամբ, պտղաբերութեամբ համարեա ամենավերջին տեղն են բռնում։ Յիշատակենք, որ միևնոյն վիճակի մէջ են նաև մի քանի Թուրքական գիւղեր։ Սակայն ընդհանուրութեան վերաբերմամբ նոյնը պնդել չէ կարելի։ Այսպէս, օրինակ, Կուր գետի երկու ափերն էլ ընդարձակ հովիտներով և պտղաբեր անսահման դաշտավայրերով բռնված են Թուրքական ցեղերով։ Դարերի ընթացքում ձիւնից ու անձրևից գոյացած հեղեղները քերելով լեռնադաշտերն ու ձորերը՝ պոկել տարել են իրանց հետ հողի վերևի շերտերում գտնվող եփված սննդարար մասերը և առատութեամբ ողողել ցածր հարթութիւնները (Կուր գետի հովիտներում), որպէս անթիւ բարիք Թողնելով մեզ ցից ու տկլոր ժայռերը իբրև ժառանգութիւն։ Այսպիսով երկարաձիգ ժամանակի ընթացքում այս բնական երևոյթը կրկնվելով դարձրել է դաշտավայրերը հարիւրապատիկ աւելի արգասաւոր, քան լեռնամասերն են։ Սրանով պէտք է մասամբ բացատրել այն իրական հանգամանքը, որ հայ գիւղացին տարեկան մի անգամ հողն ակօսելով մէկին հազիւ է կարողանում 3—4 ստանալ, մինչդեռ Թուրքը, միևնոյն հողը, տարեկան երկու անգամ վարելով՝ յաջորդաբար ցորեն ու կորեկ է ցանում և եկամուտ ստանում 7—12։ Այստեղ, արդիւնքի տեսակէտից, գուցէ կլիմայական և ռոռոգման պայմաններն էլ որոշ ազդեցութիւն ունենան, միայն փաստն այն է, որ չը նայած նոյնիսկ այն պարզ իրողութեան, որ հայ գիւղացին անհամեմատ լաւ է մշակում հողն իր հարևան Թուրքից, որ նա աւելի է ճիգ ու ջանք գործ դնում իր ցանքսի վերաբերմամբ, այնուամենայնիւ Թուրք գիւղացու աշխատանքը բնութիւնից առաւել է վարձատրվում, քան հայ գիւղացունը։ Բացի այս հայ գիւղացին հող էլ չունի, նա իսկապէս զուրկ է բաւարար հողաբաժնից. նա ստիպված է իր գոյութիւնը քաշ տալու համար միևնոյն հողը առանց հանգստացնելու միշտ մշակելու, Թէկուզ դրանով հենց իր արդիւնքի հիմքը փոփոխած լինի։ Գիւղացին, որ իր գոյութեամբ ամբողջովին կապված է հողի հետ, երևակայեցէք, որ հողի քանակութիւնն ու յատկութիւնը երբեք բաւականութիւն չեն տալիս նրա բազմաթիւ կարիքներին ու այսպէս շարունակաբար տարէց տարի կենսական անհրաժեշտ պահանջները կուտակվելով միմեանց վրա՝ ուժ են տալիս այն աղէտին, որը ընդհանուր անուամբ կոչվում է սով։

Ոչ պակաս զարկ տուին այս հանգամանքների զարգանալուն վերջին տարիներիս խառնակութիւնները, որոնք կտրելով աշխատանքի աղբիւրները, սովի ծաւալմանը ընդհանուր բնոյթ տուին Կովկասում։

Եւ քանի որ հողարդիւնաբերական ու մշակման ձևերը սակաւահողութեան հետ միևնոյնը կը մնան, գոյութեան կռւի մէջ սովն ու գիւղացին էլ միշտ անբաժան եղբայրներ կը մնան մինչև վերջ։

Յ. Երիցեան

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ռուսաց սօց.-դեմօկ. բանւորական կուսակցութեան Պետերբուրգի կօնֆերենցիայից հեռացող մասը—«փոքրամասնականները»,—մի կոչ է ուղղել բոլոր բանւորներին և սօցիալ-դեմօկրատ ընտրողներին, որտեղ լուրջ քննադատութեան է ենթարկում կօնֆերենցիայում մնացող «մեծամասնականների» որոշումը։ Այդ կոչում ասված է, որ «մեծամասնականները» իրանց վճռով խախտել են համառուսական սօց.-դեմօկ. կօնֆերենցիայի որոշումը։ «Մեծամասնականների» խորհրդակցութիւնը ընդունել է, որ աջակողմեան կուսակցութիւնների «շանսերը» աննշան են, այսինքն, որ Պետերբուրգում սև-հարիւրեակային վտանգ չը կայ. միևնոյն ժամանակ որոշել են համաձայնութիւն կայացնել սօցիալիստ յեղափոխականների և աշխատաւորների հետ կադէտների դէմ միասին կռիւ մղելու համար։ Այդպիսով ուղղակի ու կոպիտ կերպով նրանք խախտում են կուսակցութեան համառուսական կօնֆերենցիայի որոշումը, որի համաձայն Թոյլատրվում է սօց.-դեմօկրատներին ընտրողական համաձայնութիւն կայացնել ընտրութիւնների առաջին շրջանում այդ դէպքում միայն, եթէ սև հարիւրեակայինների երկիւղը կայ և նրանց դէմ կռւելու համար։ Մնացեալ բոլոր դէպքերում սօց.-դեմօկ. պէտք է գործեն ինքնուրոյն կերպով։ Եթէ խորհրդակցութիւնը գտնում էր, որ սև հարիւրեակայինների երկիւղ չը կայ Պետերբուրգում, ուրեմն նա իրաւունք էլ չունէր խախտել այդ որոշումը։ Աւելի լուրջ առարկութիւններ է անում գործադիր մարմինը և այն վարմունքի դէմ, որ համաձայնութիւն կայացնելով սօցիալ.-յեղափոխականների և աշխատաւորների հետ, «մեծամասնականները» դուրս են ձգել ժողովրդական սօցիալիստներին։ Մինչդեռ, վերջիններս, ինչպէս արդէն ամենքին յայտնի է, Պետերբուրգում սերտ բլոկ են կազմել սօց.-յեղափոխականների և աշխատաւորների հետ։ Հետևապէս «մեծամասնականների» պահանջը դնում է սօցիալ-դեմօկրատներին ծիծաղելի դրութեան մէջ, որովհետև կամ պէտք է հրաժարվեն այդ պահանջից և կամ համաձայնութեան մասին բոլորովին չը խօսել։ Այնուհետև ասվում է. «Ենթադրենք, որ այդ համաձայնութիւնը կայացաւ ժողովրդական բլոկի, որոնց Թւում և ժողովրդական սօց.-յեղափոխականների հետ։ Կարող է այդ բլոկը ազատել սև հարիւրեակային սպառնալիքից։ Ո՛չ, նա աւելի ևս կուժեղացնէ։ Շնորհիւ այդ բլոկի կադէտներից շատ ձայներ կը խլվեն, բայց այդ էլ բաւական չի լինիլ յաղթութիւն տանելու ամբողջ Պետերբուրգում.—մանաւանդ բաւական չէ, եթէ բոլոր յեղափոխական և օպպօզիցիօն կուսակցութիւնների մէջ համաձայնութիւն չը կայանալու մեղքը ընտրող մասսայի աչքում ընկնելու լինի սօցիալ-դեմօկրատների և նրանց դաշնակիցների վրա։

—Յունվարի 18-ին Պետերբուրգում խորհրդակցութիւն է կայացել ժողովրդական ազատութեան կուսակցութեան և ձախակողմեան բլոկի ներկայացուցիչների մէջ, նախընտրական համաձայնութեան հարցի առիթով։ Երկու կողմերն էլ անդրդուելի են մնացել իրանց պահանջների մէջ։ Համաձայնութիւն չէ կայացել։ Սօց.-դեմօկրատ «մեծամասնականների» ներկայացուցիչները ներկայ չեն եղել։

—«Կադէտների» նոր համագումարը Ֆինլանդիայում տեղի է ունենալու փետրվարի 15-ին (28)։ Ընտրված է այդ ժամանակամիջոցը այն նպատակով, որպէսզի այդ կուսակցութեան պատկանող Պետական Դումայի նորընտիր անդամները հնարաւորութիւն ունենան մասնակցելու։

ՀԵՐՑԵՆՇՏԷՅՆԻ ԳՈՐԾԻ ԱՌԻԹՈՎ

«Рѣчь» լրագրի ասելով, «ռուս ժողովրդի դաշնակցութեան» գլխաւոր կոմիտէի մէջ ներկայումս մեծ իրարանցում է տիրում Հերցենշտէյնի սպանութեան գործի քննութեան ընթացքի պատճառով։ Վճռված է, ինչ էլ որ լինի, պաշտպանել այն անձանց պատիւը, որոնք անդամ են դաշնակցութեան և մասնակից են Հերցենշտէյնի սպանութեան գործին։ Դաշնակցութեան ղեկավարները այդ առիթով առասպելական լուրեր են տարածում։ Խօսում են, որ կոմիտէտը որոշել է ունկնդրութիւն խնդրել Ցարսկոյէ-Սելօյում տիրահաճոյ Գ.

Բուլացելի համար, որպէս գի կարողանան այդ միջոցով դադրեցնել Հերցենշտէյնի գործը։ Ցիշում են մի քանի բարձրաստիճան անձանց անուններ, որոնք խոստացել են իրանց օգնութիւնը չը խնայել։

—«Русь» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի դատաստանական քննիչը իր մօտ է հրաւիրել «Рѣчь» լրագրի խմբագիր Խարիտոնին և Իոցկևիչ-Կրասկովսկուն։ Հերցենշտէյնի գործի առիթով «Рѣчь» լրագիրը մեղսակից էր համարել Իոցկևիչ-Կրասկովսկուն, իսկ վերջինս դատ էր սկսել խմբագրի դէմ զրպարտութեան համար։ Քննիչը առաջարկել է նրանց գործը վերջացնելու հաշտութեամբ, բայց չեն համաձայնվել։ Այդ ժամանակ պատահաբար գտնվել են դատաստանական շինութեան մէջ Հերցենշտէյնի սպանութեան համար կանչված երկու վկաներ, որոնք ծառայում են Տերիօքի հիւրանոցում։ Այդ վկաները Իոցկևիչ-Կրասկովսկուն տեսնելուն պէս ճանաչել են, որ դա այն պարոնն է, որը երթևեկում էր հիւրանոցում իջևանած Լարինկինի, Ալէքսանդրովի և ուրիշների մօտ և որին վերջիններս յեղափոխական կուսակցութեան կառավարիչ էին համարում։ Վկաները իսկոյն յայտնել են դատաստանական կառավարութեանը։

ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՐՁԱԳԱՆԳ ՄԸ

«Լուսաբեր»-ին հրատարակած լուրերը վախցնել կուտան, թէ Պոլիս մեր ազգային կալուածները Թիւրք կառավարութեան կողմէն գրաւման վտանգին մէջն են։ Արդէն հաղորդեցինք, թէ Էվգաֆի Նախարարութիւնը Թոփ-Խաբուի ժամուն սեփականութիւն խանութներուն վրայ ձեռք դրած է։

Այս գուժին հետ միասին կը լսուի, թէ կրթական նախարարութիւնը մեր դպրոցներուն ալ ետեւէն ինկած է, զանոնք ալ կամաց կամաց իր ձեռքը անցընելու կը հետամտի։

Այս յափշտակութիւնները արգիլելու համար Պոլսոյ Պատրիարքարանը ի՞նչ կընէ։—Դիւանագիտութիւն։ Բայց չէ՞ գիտեր, թէ Թիւրքիոյ կառավարութիւնը իր վարչախարդի նենգամտութեան համբաւովը տխեղրահռչակ եղած է։ Հայը միշտ Թիւրքէն պիտի յաղթուի երբ անոր դէմ մարտնչումի զէնք կընտրէ դիւանագիտութիւնը։ Մեզի համար, յաղթանակի ապահովութիւնը «ոչ կարեմք» պատասխանով դիմադրանքի մէջ կը կայանայ։ Պատմութիւնը այս ճշմարտութիւնը յաճախ կը հաստատէ։ Թող Օրմանեան Պատրիարքը իր պաշտօնատեղիէն ձգէ մեկնի, թող եկեղեցիներուն դուռները շրջէ գոցէ և դպրոցները փակէ և պիտի տեսնէ, թէ սուլթանին Թիկնապահները հև ի հև Բերա իր բնակարանը պիտի վազեն, կայսերական իրատէններով, որոնք «իր հաւատարիմ հայ հպատակները» պիտի ապահովեն, թէ իրենց կրթական հաստատութիւնները և եկեղեցապատական կալուածները անձեռնմխելի պիտի մնան։

Բայց այս կտրուկ վարմունքին ականատես կարենալ ըլլալու համար, Պոլսոյ Պատրիարքական աթոռին վրայ «հէօտիւք» եպիսկոպոս մը պէտք էր բազմած տեսնէինք։

Շատ կը վախնանք, թէ ամէն բան պիտի կորսնցնենք, շնորհիւ դիւանագիտական յաւակնոտութեանց։

Բայց թէ Տ. Օրմանեան Պատրիարքը իր դիւանագիտական ճարպիկութեամբը Թիւրք նախարարներու հետ գլուխ ելլելու անզօր է, անդին շատ զօրաւոր է իր այդ ճարպիկութեամբը հայ ժողովուրդը խաղցնելու։ Օրմանեան հայ ազգը պարզապէս «կ'արծէ»։ Այսօր եռաձայն պատարագ, վաղը՝ քառաձայն. հոս քարոզ, հոն արեւգալ, օր մը ժառանաւոր օծում, ուրիշ օր մը Ընդարձակ օրացոյց։ Միշտ և հանապազ ժողովուրդին երեւակայութեանը հետ խաղալով։ Օրմանեան Պատրիարք անոր մտքին աչքերը կը շլացնէ և ժամանակ չի ձգեր, որ ազգը իրեն սպառնացող վտանգներուն ծանրութիւնը տեսնէ, մինչև որ օր մը այդ վտանգները անդարմանելի աղէտներ ըլլան։

Ու նորէն, նոր վտանգներ, նոր «արածումներ», նոր աղէտներ։

Միշտ շարունակելի։

—

Ուժգնօրէն բողոքարկու եղած ենք Պոլսոյ մէջ այն բոլոր մահափորձերուն, որոնք Հայոց Պատրիարքին ազատութիւնը կաշկանդելով, իրեն անհնարին կընեն իր պարտականութեանց գործադրութիւնը։ Բայց ահա տասնվեց ամիս է որ ոչ Պոլիս, ոչ Հայաստան ձայն ձուն ելած չէ. այս հանդարտութեան օրերէն Օրմանեան Պատրիարքը ի՞նչպէս օգտուեցաւ, ուր որ պէտք է խօսք հասկցնելու համար, թէ՝ որպէսզի այս հանդարտութիւնը տեւէ, պէտք է որ հայ ժողովուրդին արդար պահանջումներուն գոհացում տրուի, եթէ ոչ ինքը ոեւէ պատասխանատուութիւն չստանձնելով կը հրաժարի։

Մեր եկեղեցական կալուածներու յափշտակման, մեր դպրոցներու բռնաբարման սպառնալիքները կուգան կը բարդուին Հայաստանի տառապանքներուն օրէ օր ծանրացման աղէտին վրայ։

Ու Պատրիարքը ազգը քառաձայն պատարագով կը զբաղեցնէ։

Ցանցառը ո՞վ պիտի ըլլայ, եթէ քառաձայնին վաղը վեցհարուածեանը արձագանգէ։

«Լուսաբեր» Ա. Ա.

ԿՆԱՆՔԻ ՇՈՒՐՋԸ

I

Նշանաւոր տարեդարձ է այսօր։

Պատմական տարեդարձ։

Ռուս-ճապօնական պատերազմի նշանաւոր օրն է յունվարի 27 ը։

Ով հետևել է Ռուսաստանի վերածնութեան վերջին երկու տարվայ պրոցէսին՝ կը նկատի այն սերտ կապը, որ պահպանվում էր այդ երկու ականաւոր անցքերի մէջ—ազատարար շարժման և ռուս ճապօնական պատերազմի։

Անպարտելի էր թւում բիւրոկրատիան պատերազմի սկզբի ամիսներում։

Իսկ շարժումը այդ ժամանակ արտայայտվում էր հանդիստ շշնջիւնով միայն։

Բիւրոկրատիան կրեց առաջին հարուածը—Տիւրենչէնի պարտութիւնը։

Շշնջիւնը փոխվեց խօսակցութեան։

Հարուածները սկսեցին աւելի յաճախ ու [illegible] տեղի ունենալ։

Եւ ահա խօսակցութիւնը աճելով՝ դարձաւ մի աճարկու աղաղակ։

Այն՝ ինչ որ տարվայ սկզբում մի համեստ շրջան էր բռնում, հետզհետէ ստացաւ աւելի ու աւելի մեծ ծաւալ և վերջապէս դարձաւ ամենուրեք ու ամենքին մատչելի։

Հեզ աղաչանքներին փոխարինեցին խնդիրները, խնդիրները պահանջների փոխվեցին, իսկ պահանջները տեղի տուին ուլտիմատումներին...։

Սարսափելի է յետադարձ հայեացք նետել և վերակենդանացնել յիշողութեան մէջ խռովայոյզ դէպքերի փոթորիկը, որ առաջացրեց ռուս-ճապօնական պատերազմը՝ ալեկոծելով ժողովրդական կեանքի ծովը։

Դեռ 1904 թւի սկզբից նկատվում էր, որ Ռուսաստանը մեծ ճգնաժամի մէջ է։ Հին րէժիմի քայքայման պրոցէսը տեղի ունէր ամենքի աչքի առաջ, և դժուար է ասել, ինչ կը լինէր 1905 թւիը, եթէ ճապօնական հարուածներից արթնացած ռուս ժողովրդի մէջ նկատվող բորբոքումը արձագանք չը գտնէր բիւրոկրատական շրջաններում։

1905 թւին ճգնաժամը շարունակվում է։ 1905 թւիը ոչ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ աշխարհի պատմութեան մի նշանաւոր էպօխան է կազմում։ Ջրհեղեղի պէս մըտաւ նա պատմութեան մէջ, ընկղմելով իր ալիքներում բիւրոկրատիայի ասիական բռնակալութիւնը, որի տակ հեծում էր դարերի ընթացքում ռուս ժողովուրդը։ Այդ թւին նա դեռ շարունակում էր տանել պատերազմի ծանր լուծը, որ փաթթել էին նրա գլխին մի քանի արկածախնդիրներ։

Ռուսաստանը այդ ժամանակ ողբում էր իր հարիւր միլիոններ արժեցող «ամրութեան»—Պորտ-Արտուրի անկումը և ահա նրան տուին կրօնի ազատութեան հրովարտակը։ Տանջված բիւրոկրատական բռնակալութեամբ, որ իր գագաթնակէտին էր հասել Պլեվէի րէժիմով, քնջապահանջ ռուս ժողովուրդը պատրաստ էր հրճվելու և այդ հրովարտակով, որի մէջ նա Ռուսաստանի վերափոխութեան գրաւական էր գտնում։

Զէնոֆիխական անվերջ յանձնաժողովները՝ կոչված իրագործելու այդ հրովարտակով խոստացված բարենորոգութիւնները՝ զբաղված էին դատարկախօսութեամբ, ջուր էին ծեծում և չէին ուզում նկատել, որ կեանքը չէ սպասում, այլ ամեն օր առաջ է բերում նորանոր հարցեր, հարցեր՝ որոնք պահանջում էին անմիջական բաւարարութիւն, բայց որոնք անուշադիր էին մնում բիւրոկրատների կողմից։ Եւ ահա ռուս ժողովուրդը սպասողական խաղաղ դրութիւնից անցնում է գործնական յեղափոխական կռւի ուղին, որի սկիզբը անմահանում է յունվարի 9-ի օրով։

Սկսեցին խոստանալ։

Ցնցվեց Ռուսաստանը...։

Յեղափոխական գիտակցութիւնն ու յեղափոխական տրամադրութիւնը բռնեցին ժողովրդի զանազան շերտերը, արձագանք գտան երկրագնդի մի երրորդի ամենախուլ անկիւններում։ Իրանց ոտնակոխ եղած իրաւունքների համար ոտքի կանգնեցին ոչ միայն քաղաքների բանւորութիւնը և ինտէլլիգենցիան, այլ և ամենազուրկ աշխատաւոր գիւղացիութիւնը, այն ամենը, որ մտածում և զգում էր անարգանք թէ իր և թէ ուրիշների համար։

Դժուար է ասել, և վէճելու կարիք էլ չը կայ, թէ ով է եղել այդ կռւում առաջին և ամենակարևոր ույժը, կռուողը։

Բայց անկասկած է այն դերը, որ խաղացել է ռուս զօրավարութիւնը այդ կռւում...

Հրովարտակներն ու հրամանները իրար ետևից նորութիւններ էին հաղորդում։ Այդ անհեւլու բանակալ բիւրոկրատիայի հարկադրութիւնը նրա ձեռնարկած անաջող պատերազմը, որ պարզ կերպով ցոյց տուեց ռուս անգիտակից մեծամասնութեանը, թէ ինչպիսի փտած հիմքերի վրա է կառուցված արտաքուստ ամենազօրեղ բիւրոկրատիան։ Տեսքով զօրեղ՝ նա դուրս եկաւ մի շինութիւն ծղօտեայ հիմքերով, որ շուռ եկաւ ճապօնական առաջին հարուածներից։ Ահա թէ ինչու արժէ անպայման յիշատակել ռուս զօրավարներին և ծովակալներին, որոնք անշուշտ աչքի ընկնող դեր խաղացին Ռուսաստանի ազատարար շարժման պատմութեան մէջ։

Կուրոպատկինի զօրավարի իւրաքանչիւր նահանջը, իւրաքանչիւր քայլը դէպի ետ՝ Ռուսաստանի համար մի թռիչք էր դէպի առաջ։ Եւ երբ նա Մուկդէնի աղէտից յետոյ մի առ ժամանակ կանգ առաւ՝ նոր օգնութիւն ստանալու յոյսով, այդպիսով թողնելով խայտառակված բիւրոկրատիան սաստիկ անորոշ դրութեան մէջ,—այն ժամանակ նրա դերը փառաւորապէս վերջացրեց ծովակալ Ռոժեստվէնսկին, որ Ցուսիմի մօտ ռուս բիւրոկրատիային հասցրեց վերջնական և մահացու հարուածը...

Ար-Թոն

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

XI

Պարլամէնտարիզմը եւ կուսակցութիւնները Անգլիայում

Շատ տարածված է այն կարծիքը, թէ ներկայացուցչական սիստեմը անխուսափելիօրէն բուրժուազիայի տիրապետութիւնն է նշանակում։

«Եթէ կայ մի որևէ անհերքելի ճշմարտութիւն,—գրում էր Րիտտինգաուզէնը 1869 թ.,—այդ՝ 20 տարի սրանից առաջ իմ յայտնած այն առաջադրութիւնն է, որ երկրի ամեն մի կարգ, որը որոշում է պետութեան մէջ ապրող քաղաքացիների փոխադարձ յարաբերութիւնները և կանոնաւորում է նրանց կալուածական ու արտադրական յարաբերութիւնները, անպատճառ համապատասխանում է կառավարչական մի այնպիսի յատուկ ձևի, որը նրանց համար միաժամանակ թէ գործադիր և թէ պաշտպանողական (охранительный) օրգան է։

«Ազնուականութիւնն ու բուրժուազիան, յամենայն դէպս, մինչև որոշ աստիճան, հասկացել են այս ճշմարտութիւնը, բայց այն չափով միայն, ինչ չափով որ դա վերաբերվում է նրանց սեփական շահերին։ Այդ երկու դասերն էլ գիտակցում էին, որ իրանցից առաջինի դասակարգային տիրապետութիւնը սերտ կապված է բռնապետական միապետութեան կառավարչական ձևի հետ, այնինչ երկրորդի տիրապետութիւնը, ընդհակառակը, կարող է լինել ու պահպանվել միմիայն, այսպէս կոչված, ներկայացուցչական սիստեմով։

Բայց այդ գիտակցութիւնն էլ զուրկ չէր մի քանի [illegible] սխալներից. այսպէս, օրինակ, բուրժուազիան հասկացողութիւն չունէր այն մասին, թէ իր համար այնչափ սոսկալի թւացող ընդհանուր և ուղղակի ընտրողական իրաւունքի ընդունվելը չէր կարող ոչ մի էական փոփոխութիւն մտցնել ներկայացուցչական սիստեմի մէջ» [1]։

Ցաւօք սրտի, մենք ստիպված ենք ամենակտրական ձևով հերքել այստեղ առաջադրված ամենաանհերքելին բոլոր ճշմարտութիւններից։ Պատմութեան վրա հէնց առաջին հայեացքը գցելով, իսկոյն խորտակվում է ներկայացուցչական սիստեմի ու բուրժուազիայի տիրապետութեան միջև եղած անքակտելի կապի վերաբերեալ առակը։ Ներկայացուցչական սիստեմը քաղաքական մի ձև է, իսկ նրա բովանդակութիւնը միշտ եղել է և կարող է լինել շատ ու շատ բազմատեսակ։

Եւրոպական պետութիւններից շատերում ներկայացուցչական սիստեմը չէ, որ բուրժուազիայի տիրապետութիւնը, աբսօլիւտիզմը մտցրեց։ Այն պետութիւնների մէջ, ուր մենք նախորդ դարում սահմանափակ միապետութիւն ենք տեսնում, ներկայացուցչական սիստեմը մի միջոց էր ազնուականութեան դասակարգային տիրապետութեան համար։

Այդ բանը կարելի է ասել ոչ միայն Լեհաստանի ու Շվեցիայի մասին, այլև Անգլիայի մասին, ինչպէս որ մենք արդէն կարողացանք համոզվել։

Անգլիական պարլամենտը, ինչպէս յայտնի է, երկու պալատներից է կազմված. վերին՝ լորդերի պալատը և ստորին՝ համայնքների պալատը։ Առաջինը, բնական է, հէնց սկզբից խոշոր հողատէրերի դասակարգի ներկայացուցիչն էր և այդպիսին էլ նա մնացել է մինչև այսօր։ Նա կազմվում էր և կազմվում է գլխաւորապէս խոշոր ազնուական ցեղերի ներկայացուցիչներից։

Բայց ի՞նչ պատճառներ կային, որ անգլիական ստորին պալատը 18-դ դարում մի միջոց դարձաւ հողային արիստոկրատիայի տիրապետութեան համար։ Մի կողմից այն հասարակական նշանակութիւնը, որ անգլիական խոշոր կալուածատէրերը կարողացան իրանց վերաբերեալ իրաւունքները պահպանել և աւելի զօրեղցնել, հակառակ միւս դասակարգերի, իսկ միւս կողմից այն ընտրողական իրաւունքը՝ որ համապատասխան էր ազնուականութեան շահերին։

Ընտրողական շրջանների բաժանումը Անգլիայում կատարվում էր, և հէնց հիմա էլ կատարվում է այն ձևով, ինչպէս որ հին ֆէօդալական ժամանակներում էր. երկիրը բաժանվում է կոմսութիւնների, գիւղական և քաղաքային ընտրողական շրջանների։

Գիւղական շրջաններում հէնց սկզբից հողատիրութիւնն էր թագաւորում. ընտրողական իրաւունք ունէին միմիայն այն հողատէրերը, որոնք 40 շիլինգից*) աւելի հողային եկամուտ ունէին։ Որչափ 18 դ դարի ընթացքում մանր հողաբաժինները աւելի էին միմեանց միանալով խոշոր հողաբաժիններ կազմում, այնքան էլ գիւղական շրջանները աւելի ու աւելի էին կենտրոնանում խոշոր կալուածատէրերի ձեռքում։ Բայց այս վերջինների համար խնդիրը շատ աւելի նպաստաւոր պայմանների մէջ էր գտնվում և քաղաքներից շատերում։ Մենք արդէն մատնանշեցինք այն հանգամանքը, որ արտադրութեան կապիտալիստական եղանակը միշտ ձգտում է ժողովրդին կենտրոնացնել մի քանի մեծ քաղաքների մէջ, իսկ հաղորդակցութեան ճանապարհներից հեռու գտնված փոքր քաղաքների աճումը կանգնեցնում է նա և մինչևիսկ կատարեալ անկումի է ենթարկում դրանց։ Այդ բանը շատ խիստ երևան եկաւ Անգլիայում։ Արագութեամբ աճող քաղաքների մեծ մասը, բացի Լօնդօն Սիտիից*), նոր ժամանակներում է հիմնվել, և նրանք դասաւորված են մի քանի խոշոր կալուածատէրերի գիւղական շրջաններում։ Այդ քաղաքները բոլորովին գոյութիւն չունէին ընտրողական իրաւունքի համար։

Հին քաղաքներում ընտրողական յարաբերութիւնները շատ բազմատեսակ էին. սկզբում ամեն մի քաղաք ինքը որոշեց իր ընտրողական իրաւունքները։ Որչափ այդ քաղաքները աւելի ու աւելի անկման վիճակի էին հասնում, որչափ կեանքը նրանցից աւելի ու աւելի հեռու էր գնում, այնչափ էլ նրանց ընտրողական սիստեմը աւելի քարացած ու արուեստական ձևեր էր ընդունում, և այնչափ էլ աւելի ընտրողական իրաւունքով օգտվողների թիւը սահմանափակվում և արտօնեալների մի փոքրիկ խումբ էր դառնում։

Մինչև 1832 թ., երբ հրատարակվեցաւ րէֆօրմի Բիլը, այն քաղաքային շրջաններին վերաբերեալ որոնք 200-ից պակաս ընտրողներ ունէին միայն. այդ կարգի շրջանների թիւը 111-ի էր հասնում, որոնցից 46-ը 50-ից էլ պակաս ընտրողներ ունէր։ Իսկ Old Sarum անունով շրջանը մինչև իսկ միմիայն 12 ընտրողներ ունէր։ Այդ դեռ բաւական չէ, քուէարկութիւնն էլ կատարվում էր հրապարակով, ձեռքեր բարձրացնելով։ Ոչինչ զարմանալու չէ ուրեմն, որ այն ժամանակ միշտ ճնշումներ էին տեղի ունենում ընտրողների վրա և, նամանաւանդ, շատ տարածված էր կաշառքը։ Ընտրողների այդպիսի փոքր քանակութեան դէպքում շատ հեշտ էր կաշառելը, և այնչափ աւելի հեշտ, որչափով անկման վիճակի մէջ գտնված փոքր գաւառական քաղաքները աւելի զուրկ էին վաստակ ունենալու հնարաւորութիւնից։ Շատերի համար ընտրողական ձայնի ծախելը ամենաարդիւնաբեր գործն էր համարվում [2]։

Կաշառքը պաշտօնապէս Պիտտը ընդունեց իբրև մի կանոնաւոր և օրինական եկամուտ, և 1782 թւին նա մի նախագիծ մտցրեց պարլամենտ, որով 36 ամենափչացած ընտրողական շրջանները պէտք է կորցնէին իրանց ընտրողական իրաւունքը։ Պիտտը առաջարկեց նրանց, իբրև վարձատրութիւն իրանց ձեռք բերած իրաւունքը կորցնելու, մի շատ չնչին կաշառք, ընդամէնը 1,000,000 ֆունտ ստերլինգ (մօտ 10 միլիոն ռուբլի) [3]։ Սեփականութիւնը սուրբ է!։ Չը պէտք է, սակայն, մտածել, թէ ընտրութիւնների ժամանակ գործադրվող կաշառքը յատուկ է բացարձակապէս պարլամենտարիզմին։ Կաշառքը մեծ դեր էր խաղում ժողովրդային ժողովների համար պաշտօնական անձինք ընտրելու ժամանակ էլ Հռոմում և Աթէնքում, կը նշանակէ, և անմիջական ժողովրդային օրէնսդրութեան օրով էլ։ Կաշառքը ընտրութիւնների ժամանակ գոյութիւն ունէր և «ազնիւ» շվէյցարացիների գիւղական համայնքներում էլ, ինչ որ ապացուցանում են դրա դէմ հրատարակված օրէնքները։ Կաշառակերութիւնը նկատվում է այն բոլոր կանտոններում, որոնք իրանց իշխանութեան ներքոյ և իրանց կողմից շահագործվող հողեր ունէին։ Նամանաւանդ շատ արդիւնաւէտ էր այդ՝ իշխանութեան տակ եղած հողերում «ֆօգտ»-ի պաշտօնը, և այդ պաշտօնը ձեռք գցելու համար արժէր ընտրողներին կաշառել ոչ միայն ճաշկերոյթներով, այլ և ուղղակի դրամով էլ։ Մինչև որ ընտրովի պաշտօնը շահագործութեան մի միջոց կը լինի,—կամ, գոնէ, այդ բանին կը ձգտի,—կաշառքները ընտրութիւնների ժամանակ չեն անհետանայ։

Բայց արիստոկրատիան այդ ընտրողական սիստեմով էլ չէր բաւականանում։ Իր աջողութիւնը կատարելապէս ապահով դարձնելու համար, նա որոշեց, որ գիւղական համայնքի պատգամաւորը պէտք է 600 ֆունտ ստերլինգ (մօտ 6 հազար ռուբլի) հողային ռենտա ստանայ։ Քաղաքային պատգամաւորն էլ պէտք է կալուածատէր լինէր, որի ստացած ռենտան գոնէ 300 ֆունտ ստերլինգի պիտի հասնէր։

Այսպիսի ընտրողական օրէնքներով արիստոկրատիան իր նուաճած տիրապետութիւնը ապահովեց։ Այդպիսով պարլամենտը կալուածատէրերի դասակարգային տիրապետութեան գործիքը դարձաւ։

Բայց հէնց իրանք կալուածատէրերը երկու կուսակցութիւնների բաժանվեցին։ Մի կողմում մենք տեսնում ենք արդի կալուածատէրերին, կապիտալիզմի կողմնակիցներին, որոնք իրանց օգուտները ստանում են կապիտալիստական սիստեմի զարգացումից, վաճառականութիւնը խնամակալելուց, կօլոնիական քաղաքականութիւնից, կապիտալիստական կապալային սիստեմից։ Իսկ միւս կողմում մենք տեսնում ենք պահպանողական կալուածատէրերին, որոնք ֆէօդալական սիստեմով շահագործելու կողմնակից էին։ Առաջինները, «ուիգի»-ները, իրանց կողմնակից ունէին բուրժուազիային, նրանց տնտեսական տեսակէտից գերադասում էին միւս դասակարգերը և այն հայեացքի կողմնակից էին, թէ արդի պայմանների մէջ պարլամենտի տիրապետութիւնը ազնուականութեան շահերին համապատասխանող ամենալաւ ձևն է, նրա դասակարգային տիրապետութիւնը պահպանելու համար։ Իսկ վերջինները՝ «տօրիս»-ները իրանց տնտեսական զարգացումով յետ մնացած լինելով, ընդհակառակը, ամենից լաւը համարում էին, որ հողային արիստոկրատիան ձգտէր պետութեան մէջ նշանակութիւն ձեռք բերել նոյն ճանապարհով, ինչպէս և ֆրանսիական ազնուականութիւնը՝ թագաւորական իշխանութիւնը շահագործելու ճանապարհով։ Եթէ «ուիգի»-ները պարլամենտական ամենակարողութեան կողմնակիցներ էին, «տօրիս»-ներն էլ անսահման միապետութիւն էին պահանջում։ Չը նայելով դրան, տօրիների բնոյթը 18 դ դարի ընթացքում փոխվեց։ Պարլամենտի տիրապետութիւնը այնքան խոր արմատներ գցեց, որ ոչ մի քաղաքական անձ լրջութեամբ չէր կարող մտածել այդ տիրապետութիւնը խախտել։ Միևնոյն ժամանակ տօրիներն էլ նոյն չափով կապիտալիստական շահերով շահագրգռվեցին, ինչպէս և ուիգիները։ Հետզհետէ այդ երկու կուսակցութիւնների միջև եղած տարբերութիւնները նւազեցին և, վերջապէս, նրանք այլևս աւելի չէին այն տարբերութիւններից, ինչ որ ծագում էին այդ երկու կուսակցութիւններից իւրաքանչիւրի միջև։ Եւ եթէ, այնուամենայնիւ, տարաձայնութիւնները երկու կուսակցութիւնների միջև շարունակվում էին, դրա պատճառը լոկ այն հանգամանքն էր, որ պետական ղեկը շատ քիչ էր ասպարէզ տալիս նրանց միաժամանակ գործունէութիւն ունենալու։

(Կը շարունակվի)

---

[1] Րիտտինգաուզէն. «Անմիջական ժողովրդային օրէնսդրութեան անհրաժեշտութեան մասին»։ Ծ. Հ.

*) Մէկ շիլինգը մօտաւորապէս 50 կոպ. է։ Ծ. Թ.

*) City անգլիերէն քաղաք է նշանակում, բայց այդ անունով կոչվում է Լօնդօնի կենտրոնական մասը, որը հէնց ամենահին քաղաքն է եղել։ Ծ. Թ.

[2] 18-դ դարի վերջում, մանր ընտրողական շրջանները փողով գնելու մասին արված հաշիւը ցոյց տուեց, որ դրա համար ծախսվել է 1,260,000 ֆունտ ստերլինգ (12,500,000 ռուբլի աւելի)։ Որպէսզի յաճախ ստիպված չը լինեն այդպիսի թանգ զուարճութեան դիմելու, պարլամենտը, դեռ Գէորգ առաջինի օրով, երկարեցրեց իր իրաւասութեան շրջանը 3-ից մինչև 7 տարի։ Մինչև օրս էլ դեռ այդ ժամանակաշրջանն է պահպանվում։ Ծ. Հ.

[3] Գնէյստ. «Անգլիական պարլամենտը 9-րդից մինչև 19-րդ դարի վերջը»։ Բեռլին, 1886, 2-րդ հրատ.։ Ծ. Հ.

Ի ՋՈՒՐ ԷՆ ԳԼՈՒԽ ՊԱՏՌՈՒՄ

Որչափ մօտենում է յունվարի 28-ը, այնչափ էլ ընտրողական պայքարը աւելի ու աւելի սուր կերպարանք է ստանում մեզանում։ Գործող կուսակցութիւնները լարել են իրանց բոլոր ույժերը, բայց նամանաւանդ, ինչպէս և պէտք էր սպասել, լարել է իր բոլոր ույժերը Դաշնակցութիւնը։ Եւ դա հասկանալի է. այս ընտրութիւնները Դաշնակցութեան համար կենաց և մահու խնդիր են ներկայացնում։ Վերջին ամիսներում նրա կրած հարուածները այնպիսի վէրքեր բացեցին նրա մարմնի վրա, որ հիմա խեղճը ինքն էլ չէ իմանում, թէ արդեօք պիտի կարողանայ այսուհետև երկար ապրել, թէ ոչ՝ վէրքերը մահացու չեն։ Եւ ահա, նա լարել է իր բոլոր ույժերը այդ կենաց և մահու խնդիրը ստուգելու համար։ Զգալով հանդերձ իրանց կիսամեռ վիճակը, պ. պ. դաշնակցականները կաշուից դուրս են գալիս, հասարակութեանն ու աշխարհին ցոյց տալու համար, թէ իրանք ոչ միայն դեռ կենդանի են, այլ և նոյն առողջ ու կայտառ դրութեան մէջ են գտնվում, ինչ որ էին սրանից մի տարի առաջ։

Եւ այդ նպատակին հասնելու համար, ասում ենք, Դաշնակցութիւնը, ըստ իր հինաւուրց սովորութեան, այլ ևս ոչ մի արգելքի առաջ կանգ չէ առնում, միջոցների մէջ և ոչ մի խտրութիւն չէ դնում. կեղծիք, ստութիւն, խարդաւանք, զրպարտութիւն, բռունցք, սպառնալիք, մի խօսքով՝ ամեն բան, ինչ որ միշտ պատրաստ կայ Դաշնակցութեան արսենալում։ Ո՞վ ծանօթ չէ այդ արսենալի հետ, ով չը գիտէ, որ այդ պարոնները, հէնց որ օրհասական տագնապի մէջ են ընկնում, իսկոյն մի կողմից՝ իրանց խմբագրատան մթերանոցից հրապարակ են հանում մի ինչ որ ազատված բութ Սլաք, որով եթէ անկարելի է իրանց հակառակորդներին վէրք հասցնել, գոնէ փորձում են նրա վրայի աղբը սրբել, իսկ միւս կողմից հրապարակ են նետվում Դաշնակցութեան ամենամեծ յոյս ու ապաւէն բէգ փափախաւոր զինուորները։

Սակայն, մեզ թւում է, թէ բոլորովին ի զուր է դաշնակցականների այդ աստիճան իրարանցումն ու ալեկոծութիւնը, որովհետև երկար տարիների ընթացքում ամենախիստ շովինիզմի ոգով կրթված ու դաստիարակված հայ հասարակութեան, նամանաւանդ նրա մանր ու խոշոր բուրժուազիական խաւերի մեծ մասը հաւանականօրէն դաշնակցականներին պիտի տան իրանց քուէները, որովհետև հրապարակի վրա եղած կուսակցութիւններից միմիայն Դաշնակցութիւնն է, որ զուտ հայկական կուսակցութիւն է ներկայանում ու միմիայն հայ թեկնածուներ է հրապարակ դնում։

Բայց այդ հանգամանքը երբեք չէ կարող մի գրաւական կամ ապացոյց լինել Դաշնակցութեան ներկայացրած ույժի վերաբերեալ, որովհետև մենք շատ ու շատ հայ քրիստոնեաներին ենք պատահել այս մի քանի օրվայ ընթացքում, որոնք խոստովանելով հանդերձ, թէ իրանց սրտում ատելով ատում են թէ դաշնակցականներին և թէ Դաշնակցութիւնը, բայց և այնպէս մտադիր են իրանց քուէները դրանց թեկնածուներին տալ։ «Աւելի լաւ է մի քոնծրուտ դաշնակցական ընտրվի,—ասում են այդ կարգի հայ քրիստոնեաները,—քան թէ մի վրացի կամ այլազգի»։

Ահա ձեզ ի «դասակարգային հողի վրա գործող» մեր «սօցիալիստ» դաշնակցականները։

Հրաշալի «սօցիալիստական» դաստիարակութիւն է տուել Դաշնակցութիւնը, այն աստիճան հրաշալի, որ այսօր ինքը հասարակութեան համար աւելի ու զգալի դարձած լինելով հանդերձ, ահագին քանակութեամբ հայ քրիստոնեաների քուէներ պիտի վաստակի լոկ նրա համար միայն, որ իր ներկայացրած թեկնածուները զուտ հայեր են...

«Սօցիալիստ» ու «դասակարգային հողի վրա գործող» դաշնակցականները, շատ լաւ ճանաչելով իրանց կրթած հասարակութիւնը, հէնց այսօր էլ իրանց ընտրողական ագիտացիան ազգայնական հողի վրա են դնում և հասարակութեան շովինիզմն են բորբոքում. «Անցեալ անգամ վրացի էր ընտրվել պատգամաւոր, ինչո՞ւ այս անգամ էլ հայ չընտրվի», ասում են նրանք աղերսական ձայնով իրանց «Ժամանակ» թերթում։ Եւ կամ. «Տեսէք, տեսէք,—ասում են նրանք նոյն «Ժամանակում» ցասկոտ ձայնով,—Լ. Սարգսեանը ասել է, թէ ինքը շատ աւելի շուտ մի Թուրքի ձայն կը տայ, քան մի դաշնակցական հայի»։ Ո՜րպիսի մեծ յանցանք, ո՜րպիսի սրբապղծութիւն «սօցիալիստ» դաշնակցականների աչքում, որ հայ քաղաքացին ցանկութիւն է յայտնում իր քուէն տալ մի վրացու կամ մի Թուրքի, հաւատացած լինելով, որ դրանք աւելի լաւ պիտի կարողանան պաշտպանել իր հայեացքներն ու դասակարգային շահերը, քան մի [illegible] ու քաօսի մէջ խարխափող դաշնակցական...

Եւ այդ կարգի շովինիզմի թոյն տարածող ազգամոլները դեռ յանդգնութիւն ունեն մերթ ընդ մերթ լալկան ձայնով գանգատվելու, թէ ի զուր տեղն են իրանց շովինիզմի մէջ մեղադրում հակառակորդները, թէ իրանք միշտ դրացի ժողովուրդների ու նամանաւանդ նրանց «աշխատաւոր» մասսաների հետ եղբայրութիւն ու համերաշխութիւն են քարոզել...

«Ազգերի ու ժողովուրդների եղբայրութեան և համերաշխութեան» շատ հիանալի քարոզներ են, այո, վերոյիշեալ շովինիստական ցասումները։ Բայց բանը նրանումն է, որ Դաշնակցութեան հասկացած իմաստով «ազգերի եղբայրութիւն ու համերաշխութիւն» միշտ և շարունակ քարոզում է նաև... «իսկական ռուս մարդկանց» կուսակցութիւնը։ Եւ ինչպէս որ այս կուսակցութեան յետևից գնում են ռուս ժողովրդի ամենաանգիտակից և քաղաքականապէս տհաս տարրերը, այնպէս էլ, անշուշտ Դաշնակցութեան յետևից պիտի գնան հայ ժողովրդի նոյն տեսակի տարրերը, որոնք դժբաղդաբար փոքր տոկոս չեն կազմում։

Այդ մասին դաշնակցականները կարող են միանգամայն ապահով լինել։

Խ.-Ազատ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կիսլովոդսկ, յունվարի 18-ին

Ի միաժամութիւն պ.պ. նուիրատուների, խնդրեմ «Մշակում» տպագրէք հետևեալը.—իմ և ճարտարապետ պ. Է. Խօջայեանի միջոցով տեղիս հայերից հանգանակած Կովկասի հայ աղէտեալների օգտին 736 ր. 50 կ. ուղարկված է Բագու պ. Բ. Դօլուխանեանին (այդ գումարից 500 ր. նուէր պ. Գ. Տէր-Մարգարեանի—ինքը պարոնը Բագու գնացած ժամանակ անձամբ յանձնել է Դօլուխանեանին), իսկ մնացած 236 ր. 50 կ. համար պ. Ճաճիկեանից ստացած ունեմ անդորրագիր № 604։ Ուղարկված է պ. Դօլուխանեանին նաև Կիսլովոդսկում տեղական գրադարանի անունով հանգանակած գումարի մնացորդ 46 րուբլին, որի համար կայ նոյնպէս անդորրագիր № 603։

Նուիրատուների ցուցակը։

Գ. Տէր-Մարգարեան 500 ր., Է. Խօջայեան 25 ր., տիկին Թ. Խօջայեան 25 ր., Ս. [illegible] 25 ր., Ք. Օսէփեան 25 ր., Մ. Թամբիեան 25 ր., Ա. Գալստեան 40 ր., Թ. Մեսնիկեան 10 ր., Ա. Թամբիեան 10 ր., Կ. Թամբիեան 5 ր., Ոմն 5 ր., Ա. Ցակոբջանեան 5 ր., Մենասարեանների ժառանգներ 5 ր., Սախեան 5 ր., Յ. Աչակեան 5 ր., Ն. Խարայեան 5 ր., Ա. Բեջանեան 1 ր., Խանամիրեան 50 կ., Գրիգորեան 1 ր., Գ. Թամբիեան 2 ր., Մանուչարեան 1 ր., Զալամեան 3 ր., Ոմն 1 ր., Մելքոնեանների եղբ. 3 ր., Տօլմաղեան Գ. 1 ր., Խ. Գասպարեան 1 ր., Մ. Դերչիկեան 50 կ., Գ. Լ. Թամբիեան 50 կ., Թամբուլեան 1 ր., գումարը 736 ր. 50 կ.։

Գր. Տէր-Յովհաննիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ ամենուրեք ահագին քանակութեամբ եկած ձիւնի պատճառով, Կենտրոնական Ռուսաստանում, ինչպէս և Րոստով, Մօսկվա, Օդեսսա, Րոստով և Թիֆլիսի մօտերը հեռագրաթելերը ժամանաւոր կերպով փչացել են։ Թելերը կտրտվում են ինչպէս ոստայններ։

—

Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորների նոր ցուցակները կը հրատարակվեն այսօր, յունվարի 27-ին։

—

Մօտ օրերս վախճանված գնդապետ Ն. Ա. Ենիկօլօպովը կտակով թողել է 30,000 րուբլի, որի տոկոսները յատկացւում են Թիֆլիսի պօլիտեխնիկումում սովորող 3 թօշակաւորներին, որոնցից մէկ թօշակը պէտք է ստանայ րէալիստը, 2-րդը վրաց ազնուականների գիմնազիայի աշակերտը, իսկ 3-րդը արական գիմնազիայի աշակերտը։ Բացի դրանից թողել է 500 րուբլի Զրկինեանց ուսումնարանի օգտին։ («Կ. Բ.»)

—

Մտադրութիւն կայ, որ «Արտիստիքական ընկերութեան» մէջ խաղացվող «Լօտոյի» արդիւնքի մի մասը յատկացնվի սովեալների համար։

—

Բժշկա-սանիտարական խորհրդի վերջին նիստում զեկուցվել է, որ քաղաքում քութէշը բաւականաչափ պակասել է։ Հիւանդութեան ընթացքը ներկայանում է այսպէս. օգոստոսին եղել է հիւանդութեան 75 դէպք, սեպտեմբերին—108, հոկտեմբերին—304, նոյեմբերին—342, դեկտեմբերին—272 և յունվարի 1—22—130։ Ներկայումս քաղաքային բարաքներում հիւանդների թիւը հասնում է 91-ի։

—

Թիֆլիս կայարանի վիրաւորված կառավարիչ Փ. Փ. Կրէյսլէրի առողջութեան մէջ զգալի բարելաւում է նկատվում։ Նրա կեանքին վտանգ չէ սպառնում։

—

Ցունվարի 23-ին, քաղաքային վարչութեան նիստին, ունկնդրվել է վարչութեան անդամ պ. Ա. Խատիսեանի բերանացի յայտարարութեանը, որը ներկայացրել է Թիֆլիսում գազային գործարան հիմնելու վերաբերեալ հրատարակված նիւթը։ Վարչութիւնը որոշել է. 1) Քաղաքային և տեխնիքական խորհրդի կարծիքը տպել սկզբում վարչութեան «զեկուցագրերի» մէջ, իսկ յետոյ ամբողջ նիւթը յանձնել գազային գործարան հիմնելու խնդրով զբաղվող փոխ-մասնաժողովին, որի եզրակացութիւնը կը ներկայացնվի քաղաքային Դումայի հայեցողութեան։

—

Ստացանք Աշըղ Հայիրի I «Փոք Հարօն», II «Տարօրինակ աղքատ», գինն է 10 կոպ.

—

Կովկասի Փոխարքան ներքին գործերի մինիստրի առաջ պաշտպանել է Թիֆլիսի նահանգական վարչութեան միջնորդութիւնը՝ 1,500 րուբլի նպաստ տալու Գօրու գաւառի Պլավիմանի գիւղի 29 բնակիչներին, որոնք վնասվել են անցեալ տարվայ օգոստոս ամսի հրդեհից։

—

Կ. Ն. Քավթարաձէն միջնորդութիւն է յարուցել թոյլատրելու իրան հրատարակել Թիֆլիսում ամենօրեայ լրագիր վրացերէն լեզվով—«Ամիրանի» անունով։

—

Քաղաքային վարչութիւնը յունվարի 25-ին յայտնել է քաղաքային գիշերային պահապանների կառավարիչներին, որ գործազուրկ գիշերապահներից մի որոշ մասը կարող է իր համար համապատասխան պաշտօն գտնել Թիֆլիսում աշխատանքի տան մէջ։

—

Թիֆլիսի նահանգապետը կազմել է Թելաւ քաղաքի քաղաքային լիազօրների հետևեալ ցուցակը 4 տարվայ համար 1906—1910 թ. 1) Ղուլիջանով, Ի. Կ. 2) Պապաով, Ի. Դ. 3) Խիզանով, Գ. Ի. 4) Տէր-Ցարութիւնեան, Մ. Ա. 5) Կուրդգելով, Գ. Պ. 6) Տէր-Սարգսեան Ա. Ա. 7) Վերմիշեվ Մ. Ա. (Շիխանով Պ. Փ. 9) Դուբրօվ Ա. Ա. 10) Տատուզով Գ. Բ. 11) Րօստոմով Ի. Պ. 12) Դոտանձէ Ս. Ե. 13) Կօխտևով Բ. Գ. և 14) Մ. Գ. Բեգիջանով։ («Կ. Բ.»)

—

Տանուտէր Նինա Լիպարիձէն և բնակիչներ Յովհաննէս Շահնազարեան և Իւլիա Սախացկայեն 50-ական րուբլի տուգանքի են ենթարկված հացեղէնների սեղանի մասին կանոնները խախտելու պատճառով։

—

Ցունվարի 25-ին, 9-րդ քաղաքամասում ձերբակալել են 3 հոգու, որոնք մեղադրվում են Վորոնցովի մօտ սպանված վաճառական Խիզանեանի սպանութեան մէջ։

—

Թիֆլիս է ժամանել Գոնձակի նահանգապետ Ա. Ա. Կալաչեվը։

—

Հ. Մ. Օհանջանեանը դատական պատասխանատուութեան է կոչում «Кавказская Рѣчь» լրագրի նախկին խմբագիր Միխ. Ալ. Ջաբաբին—զրպարտութեան համար։

—

«Страна»-ի փոխարէն լոյս է տեսնում «Телеграфъ» անունով լրագիրը։

—

Անդրկովկասի երկաթուղային կառավարիչ գնդապետ Նէյդգէրաուէրը կարգադրել է 3 ամսով բանտարկել Սաբունչի կայարանի երկաթուղային ծառայող Ի. Ա. Ստէնկէվիչին—անկարգութիւն անելու և ճանապարհորդներին ու երկաթուղային պաշտօնեաներին վիրաւորելու համար և ապա աքսորել հայրենիք։ Ինչպէս հաղորդում են «Баку» լրագրին, Ի. Ա. Ստէնկէվիչը արդէն մէկ ամիս է, որ վախճանվել է երկաթուղային հիւանդանոցում։

—

Կովկասի զինուորական վիճակի զօրքերի ընդհանուր հրամանատարի կարգադրութեամբ նահանգական շտաբին հրամայված է՝ երկարացնել մինչև ապրիլի 1-ը Քութայիսի նահանգի Սամտրէդի և Խոնի գիւղաքաղաքների պօստ-հեռագրական բաժանմունքների զինուորական հսկողութիւնը։

—

Կարսի շրջանի զինուորական նահանգապետը և Երևանի արքունական պալատը Կովկասի

Փոխարքայի առաջ պաշտպանում են Կարսի շրջանի Թուրքաց կարկտահար Ղարաքլիսա գիւղի բնակիչների միջնորդութիւնը՝ 5 տարով յետաձգելու հարկերի և զինուորական տուրքերի ստանալը, որոնք ընդամենը անում են 5868 ր. 82 կոպէկ։

—

Ադմինիստրացիայի կարգադրութեամբ, Մոսկվայում փակվել է գրասենեկապետների և հաշուապահների դաշնակցութիւնը։

—

«Русь»-ը հաղորդում է, որ իբր ոստիկանութեան մէջ ներկայումս կան այնպիսի փաստաթղթեր, որոնցից երևում է, որ կասկած չը կայ, որ առաջիկայ ընտրութիւններին կը յաղթեն ընդդիմադիր մարմինները։

—

Հայ ֆիրմաների իրանց նաւթահանքերի ծախելու կամ իրանց սեփականութիւնը մի այլ ձևի փոխելու ձգտումը, ոչ միայն չէ թուլանում, այլ, ինչպէս հաղորդում է «Баку» լրագիրը, աւելի ուժեղանում է։ Դեռ երէկ մենք հաղորդեցինք մեր ընթերցողներին, որ եղբ. Միրզօէվների ընկերութիւնը բանակցութիւններ է վարում ներկայումս մի քանի մանր ձեռնարկողների հետ, որոնք ցանկութիւն են յայտնել ձեռք բերել յիշեալ ֆիրմայի Բալախանու և Սաբունչու նաւթահանքերը։ Այսօր կարող ենք հաղորդել, որ «Արամազդ» ընկերութիւնը հեռագրել է իր Պետերբուրգի լիազօրին, կարգադրելով սկզբունքով համաձայնութիւն յայտնել եղբ. Նօբէլի ընկերութեան, որ կամենում է ձեռք բերել յիշեալ ֆիրմայի Բալախանու նաւթահանքը։ Այս օրերս բանակցութիւններ սկսեց և Ր. Ե. Փիթօեվ առևտրական տունը մի խոշոր ֆիրմայի հետ, որի անունը մենք առայժմ չենք կարող հաղորդել՝ որ կամենում է ձեռք բերել այդ ֆիրմայի բոլոր նաւթահանքերը։

(«Баку»)

—

Բագւում, Տելեֆոննայա փողոցում, երկաթի պահեստ ունեցող Մաշադի Բախշ Աղայեվը քաղաքապետին ներկայացրել է մի խնդրագիր, որով պահանջում է պատժել Բիբի Հէյբաթի Թաղամասում, պրիստաւի օգնականի պաշտօն վարող օկօլօդօչնի Նադգիրաշեւ Կալբաշին, նրա ոչ միայն ապօրինի, այլև ամարդի գործողութիւնների համար։ Մաշադի Բախշ Աղաեւը իր բողոքագրի մէջ յիշում է փաստեր մեղադրեալի դէմ։ Այս և բազմաթիւ բողոքագրերը ցոյց են տալիս, որ Բագւի ոստիկանութիւնը, հակառակ սենատոր Կուզմինսկու քննութեան, և նրա առիթով մամուլում յարուցված աղմուկին, ամենևին չէ կանգնած իր կոչման բարձրութեան վրա։

—

Յունվարի 22-ին, գիշերվայ ժամը 2-ին, Բագւում Կրասնօվօդսկի փողոցով անցնող կառապան Կրավցօվի վրա յարձակվում են երեք անյայտ հայեր ատրճանակներով, թալանում 3 րուբլի մի քանի կոպէկներով և փախչում։ Կառապանը քշեց թալանողների ետևից, օգնութիւն կանչելով։ Եկած ոստիկանական պահակները փորձեցին կալանաւորել նրանց, բայց նրանք հրաձգութիւն սկսեցին, որին ոստիկանութիւնը պատասխանեց, և որի ժամանակ անյայտներից մէկը սպանվեց։ Նրա ով լինելը առայժմ դեռ չէ պարզված։ (Баку)

—

Բիբի-Հէյբաթի «Օլէում» հանքի բանւորները բռնել էին իրանց միջից մէկին, որ պղինձ էր գողացել։ Բանւորները կայացրին գործաբանական ժողով, որտեղ գողին դատելով՝ հետևեալ պատիժը որոշեցին. 1) ման ածել գողբանւորին պղինձը ձեռքին արհեստանոցում և նաւթահանքում. 2) անմիջապէս արտաքսել նրան գործարանից։ Սև քաղաքի Նօբէլի գործարանում բանւորները բռնեցին երկու արհեստաւորների՝ գողացած պղնձով։ Դատի ժամանակ բանւորները հետևեալ վճիռը կայացրին. 1) բանւորներին չը յանձնել ոստիկանութեան ձեռքը. 2) անմիջապէս արտաքսել այդ բանւորներին և 3) յայտարարել ինչպէս գործարանական, այնպէս էլ հանքային շրջաններում, որ վերոյիշեալ բանւորները արտաքսված են գողութեան պատճառով։ («Баку»)

—

Երեքշաբթի, յունվարի 23-ին, ցերեկվայ ժամը 1-ին «Ստուկեն և ընկ» առևտրական տան գանձապահ պ. Գրիգորիկը 2 պահապանների ուղեկցութեամբ կառքով վերադառնում էր Սև քաղաք Մալնիկովի գործարանի բանւորներին ռոճիկներ բաժանելու համար. նոյն օրը նա պետական բանկի բաժանմունքից փող էր ստացել։ Անցնելով Վօզզալնի փողոցով և Ղուլիանի ջրաղացին մօտենալուն պէս նա ենթարկվում է 4 անյայտ անձերի յարձակման։ Գրիգորիկը, որ առաջ էլ էր ենթարկվել էքսպրօպրիատօրների յարձակմանը, զինված ընդդիմադրութիւն չը ցոյց տուեց։ Կողոպտիչները վերցրին նրանից փողերի մի մասը և ատրճանակը և սկսեցին փախչել։ Իսկոյն Գանձապահին օգնութեան հասան ոստիկանները, իսկ յետոյ և պահակները։ Նրանք ընկան չարագործների յետևից. վերջինները փախչելիս՝ ատրճանակներից կրակում էին շարունակ, ոստիկաններն էլ նոյն կերպ նրանց պատասխանում էին։ Չարագործներից երկուսը տեսնելով՝ որ իրանց հասնում են և պէտք է ձերբակալեն, թագնվում են սինագօգի բակում, ուր և ձերբակալվում են։ Երկուսն էլ ռուսներ են 19—20 տարեկան հասակի. նրանցից մէկը ոտքից վիրաւորվել է փախչելիս։ Աղբի արկղում և բակի զանազան մասերում գտնված են՝ փողերի մի մասը և 2 ատրճանակ, որոնցից մէկը գանձապահինն է եղել։ Գանձապահի մօտ եղած 3800 րուբլուց մնացել է նրա մօտ միայն 2800 րուբլի, մի հազար րուբլին, ինչպէս երևում է տարել են անյայտացող միւս 2 չարագործները։ Պատահմամբ վիրաւորվել է փողոցով անցնողներից մէկը։ Երբ ձերբակալվածներին տանելիս են եղել, ամբոխը յարձակվել է չարագործների վրա ծեծելու նպատակով, բայց ոստիկանութեանը աջողվել է ազատել չարագործներին և տանել ոստիկանատուն։ Ոստիկանատուն տանելիս մի քանի մարդիկ յարձակվել են ձերբակալվածներին ազատելու նպատակով։ Հրացանաձգութիւն է տեղի ունեցել, որի ժամանակ 2 ձերբակալվածները ծանր կերպով վիրաւորվել և ուղարկվել են բանտային հիւանդանոց։

(«Баку»)

—

Բագւի քաղաքագլխի պաշտօնակատար Բեամիլ բէկ Սաֆար Ալիեվը հիւանդացել է. նրան փոխարինում է քաղաքային վարչութեան անդամ Դ. Դ. Ցարութինեանը։

—

Բագւի քաղաքապետին իբրև ոստիկանական պաշտօնեաներ ընդունելու համար 1000 խնդրատուներից ծառայութեան են ընդունվել 450 հոգի։

—

Բագւի գիշերային ապաստարանում, դեկտեմբեր ամսվայ ընթացքում, գիշերել են 5 կոպ. վճարելով—2823 մարդ, 3 կոպէկով—1471 մարդ, իսկ ձրիաբար—4093 հոգի։ Ուրեմն ամենայն օր գիշերել են միջին թւով 280 մարդ։ Թէյ տուած է 5 կոպէկով—760 հոգու, 3 կոպ.—1528 հոգու, և ձրի—508 հոգու։ Կերակուր 758 հոգու։

—

Յունվարի 20-ին Նուխում, ոստիկան Շերեմետիեվին, օֆիցէր Գաբուլովին և ոստիկանական պահակախմբին դիմադրելու ժամանակ սպանվել են Սիբիրից փախածներ՝ Ալլահվերդի-Մահմէդ-Սալախ օղլին և Մահմեդ-Աղա-Մոլլան-օղլին։

—

Նուխուց հաղորդում են «К. Р.» լրագրին, որ այնտեղ կազմվել է մահմեդական կանանց ընկերութիւն, հայ-թուրքական ընդհարումներից վնասված թուրքերի օգտին նպաստներ ժողովելու նպատակով։ Կազմած է նաև մահմեդական բարեգործական ընկերութիւն։ Բացի դրանից մահմեդականները մտադիր են միջնորդութիւն յարուցանել կառավարութեան առաջ Նուխում ռեալական դպրոց բանալու մասին։

—

Բժշկական գլխաւոր տեսուչ ֆօն Անրէպը պաշտօնից հեռացել է. Նրան փոխարինում է բժշկապետ Լ. Ն. Մալինովսկին։

—

Մամուլի գործերի վերաբերեալ գլխաւոր վարչութիւնը, ի նկատ առնելով, որ թէ մայրաքաղաքներում և թէ կայսրութեան ուրիշ շատ քաղաքներում վաճառքի են հանվում մանր տեսակի խաղաթղթեր, որոնց պատրաստում են մասնաւոր անձինք, կարգադրել է՝ հսկողութիւն ունենալ այդօրինակ խաղաթղթեր վաճառող կրպակների վրա և արգելել յիշեալ խաղաթղթերը վաճառել։

—

Չը նայելով, որ ներքին գործերի մինիստրութեան խորհրդի անդամ է նշանակվել Լիկօշինը, որը կատարելու է ներքին գործերի մինիստրի օգնականի պաշտօնը և կառավարելու է գիւղական գործերը։ «Рѣчь» լրագրի ասելով, Գուրկօն դեռ ևս մնում է մինիստրի օգնականի պաշտօնում և ինչպէս ասում են, երբ նրան առաջարկել են հրաժարական տալ, նա պատասխանել է մերժումով, պատճառաբանելով, որ դատարանը իր գործողութիւնների մէջ չի կարող գտնել մի այնպիսի մեղադրանք, որ առիթ տար պաշտօնազուրկ անելու։

—

Արդարադատութեան մինիստրի օգնական Սոլլերտինսկու հրաժարականը իրաւաբանների և կառավարչական շրջաններում բացատրում են նրանով, որ իբր թէ նրա միջամտութիւնը Հերցենշտէյնի սպանութեան գործի մէջ անախորժ տպաւորութիւն է թողել բարձր շրջաններում, մանաւանդ որ նա կարգադրել է գաղտնի քննութիւն կատարել Պետերբուրգում այդ գործի առիթով։ «Р. В.»

—

Յունվարի 11-ին, գիշերը, Պետերբուրգում ոստիկանութիւնը խուզարկութիւն է կատարել բանւորական ուսումնարանում։ Խուզարկութիւններից յետոյ երբ հեռանում է պրիստաւը, վերջինիս հետ եղած անձնաւորութիւնը վերսկսում է խուզարկութիւնը։ Այդ անձնաւորութիւնը Ալեքսանդր Պօլօզօվն էր (Сашка косой), Պուտիլովի գործարանի բանւորը, որին ճանաչել են Պուտիլովի նախկին բանւորները։ Ֆինլանդական ոստիկանութիւնը փնտռում է նրան Պետերբուրգում, իսկ հասցէների գրասենեակը պատասխանել է, որ նա հեռացել է Պետերբուրգից յայտնի չէ թէ ուր, մինչդեռ նա մինչև այժմ էլ շարունակում է ծառայել Պետերհօֆի ոստիկանատանը։ («Тов.»)

—

Յունվարի 19-ին մինիստրների խորհրդի նախագահ Պ. Ա. Ստոլիպինը Գոմել քաղաքի տեղական ռաբբին Մայանցից ստացել է հետևեալ հեռագիրը. «Գոմել քաղաքի ընտրութիւնները նշանակված են յունվարի 25-ին, բայց միայն այսօր է ոստիկանութիւնը վերադարձրել քաղաքային վարչութեանը 1500 ընտրողական ծանուցագրեր։ Ծանուցագրեր չեն ստացել յայտնի տնատէրեր, խոշոր առևտրականներ, քաղաքային վարչութեան կապալառուները,—բոլորն էլ հրէաներ են։ Ընտրողները զրկված են ոստիկանութեան այդ վարմունքի դէմ հրէաներին ընտրողական իրաւունքից զրկելու համար, միևնոյն ժամանակ հրէաների կրած ամենօրեայ ծեծերը ռուս ժողովրդի դաշնակցութեան անդամներից, հրէա ժողովրդին սարսափահար են անում։ Երկիւղ են կրում, որ այդ բոլորը ընտրութիւնների օրվայ համար պատրաստվող մասսայական ճնշումների նախերգանքն է։ Այդ մասին անձամբ հաղորդել են Մօգիլեվի փոխ նահանգապետին։ Խնդրում ենք ձերդ գերազանցութեանը կարգադրել որպէս զի միջոցներ ձեռք առնվեն հնարաւորութիւն տալու բոլոր ընտրողներին իրանց պարտականութիւնը կատարելու։

(«Рѣчь»)

—

Գեներալ Կուրօպատկինը հրատարակել է ռուս-ճապօնական պատերազմի վերաբերեալ իր նիւթերը։ Նրա աշխատութիւնը կազմված է 4 հատորից. 1) Լեաօյեան, 2) Շախէ գետի մօտ, 3) Մուկդէն և 4) Պատերազմի հաշիւը։ Բացի դրանից առանձին հրատարակված է ռ. բանակի տեղեկագիրը, որի հրամանատարն էր նա Մուկդէնից յետոյ մինչև Պորտսմուտի դաշնագիրը։ Վերջինս բաղկացած է մի քանի հատորից և ունի բազմաթիւ յաւելուածներ։ Այդ հսկայական աշխատութիւնները նա կազմել է մի քանի աշխատակիցների օգնութեամբ թէ Մանջուրիայում և թէ վերջին ինն ամիսների ընթացքում, երբ նա ապրում էր հայրենի Պսկովի նահանգի գիւղում։ Նա բաղկացած է 2500 մեծադիր երեսներից և ունի մի շարք շատ աջող եռագոյն քարտէզներ, յատակագծեր և սխեմաներ։ Իւրաքանչիւր հատորից հրատարակված է 1500-ական օրինակ։

«Телеграфъ»

Պարիզից «Рус. Слово» լրագրին հեռագրում են, որ Ժօրէսի օրգան «Humanite»-ն մեղադրում է հեռագրական գործակալութեանը, որ վերջինս Պետական Դումայի ընտրութիւնների հետևանքների մասին հաղորդում է կեղծ տեղեկութիւններ։ («Товарищъ»)

—

Շվեդական կառավարութիւնը ինչպէս հաղորդում են Ստոկհոլմից «Рус. Слово» լրագրին,—մերժել է Ռուսաստանի նոր առաջարկութիւնը, Վիբօրգի ապստամբութեան մասնակցողներին յանձնելու մասին։

—

Կատարված քննութեան համաձայն Ուլէաբօրգի ոստիկանական այն բոլոր ծառայողները, որոնք մասնակցել էին գործադուլին այժմս ստիպված են հրաժարական տալ։

(«Тов.»)

—

Քաղաքապետի հրատարակած պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ մայրաքաղաքի զանազան մասերում յունվարի 7-14-ը կալանաւորվել են 210 հոգի։ («Т.»)

—

Տօմսկում տաժանակիրների համար գոյութիւն ունի մի բանտ, որտեղ ներկայումս գտնվում են բազմաթիւ քաղաքական յանցաւորներ, լատիշներ և հրէաներ։ Դրանց թւում կայ և մի ֆինլանդացի՝ Պրօկօպէ ազգանունով։ Բանտի վարչութիւնը, լեզուներ չիմանալու պատճառով, արգելել է բանտարկեալներին իրանց ազգականների հետ գրագրութիւն ունենալիս մայրենի լեզուներով գրել։ Մինչդեռ բանտարկեալներից շատերը ռուսերէն չը գիտեն և կամենալով իրաւունք ստանալ իրանց մայրենի լեզուով նամակագրութիւն ունենալ, անօթադուլ են յայտարարել։ Անօթադուլը արդէն հինգերորդ օրն է, որ շարունակվում է։ Հետևանքը յայտնի չէ։

(«Т.»)

—

«Русск. Слово» լրագրին Լօնդօնից հեռագրում են, որ այնտեղ լարված ուշադրութեամբ հետևում են Պետական Դումայի ընտրութիւններին, ընդունելով նրան համաշխարհային մի նշանաւոր հարց, ոչ պակաս նշանակութիւն ունեցող քան առաջին Պետական Դումայի ընտրութիւնները։ Լօնդօնի թերթերի Պետերբուրգի թղթակիցները պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա, ընտրութիւնների հետևանքները կառավարութեան համար անյուսալի են համարում։ «Times» լրագիրը ուղղակի պնդում է, որ կառավարութեան ստացած գաղտնի տեղեկութիւնները նահանգապետներից, բոլորովին տարբերվում են այն պաշտօնական տեղեկութիւններից, որոնք հրատարակվում են։ («Тов.»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունվարի։ Լրագրներում լուրեր երևացին, որ իբր պատրաստութիւն է տեսնվել պայթեցնելու ոստիկանութեան վարչութիւնը, որով այդ դաւադրութեան մասնակցել են այդ հաստատութեան ծառայողները։ Այդ տեղեկութիւնը միանգամայն մտացածին է։

ԲԵՐԼԻՆ, 24 յունվարի։ Լիբերալ մամուլը խորհուրդ է տալիս ընտրութիւնների հետևանքին վերաբերվել հանգիստ կերպով, որովհետև պահպանողականների և կենտրոնի ուժեղանալովը բէյխստագում ռէակցիան ուժեղանում է։ Մամուլը համոզում է կանցլերին ճանաչել լիբերալիզմի ույժը, քանի որ նրա շնորհիւն էր, որ աջողվեց խորտակել սօցիալ-դեմօկրատիային։ «Նօրդդոյչէն» յոյս է յայտնում, որ կենտրոնը չէ կարող թելադրել կառավարութեան իր կամքը։ Ազգային լիբերալները մի առանձին զոհունակութեամբ են խօսում լիբերալիզմի ուժեղանալու և բէյխստագում լիբերալ-պահպանողական մեծամասնութիւն տեսնելու մասին։

ՏՕԿԻՕ. 24 յունվարի։ Աշիվօյի պղնձահանքերի բանւորների ապստամբութիւնը, որ սկզբում այնքան էլ լուրջ չէր համարվում, այժմ արդէն սպառնական չափեր է ընդունում։ Ապստամբների թիւը 1000-ից անցնում է։ Հաղորդում են, որ նրանք ուժանակ էլ ունեն։ Լուրերին նայած գլխաւոր ինժիները սպանված է։ Ոստիկանութիւնը ձեռք է առել ամեն միջոցները՝ ապստամբութեան առաջն առնելու համար։—Պատգամաւորների պալատի պարլամենտական մասնաժողովը կարծիք է յայտնել՝ ընդունել նախահաշիւը համարեա առանց ուղղումների։

ՎԻԵՆՆԱ, 24 յունվարի։ Նոր սիստեմով ընտրութիւններն կը սկսվեն փետրվար ամսին։ Գլխաւոր ընտրութիւնները կը կայանան մայիսին։ Ի նկատի ունենալով նախապատրաստական աշխատանքների բարդութիւնը աւելի կանուխ անկարելի էր նշանակել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունվարի։ Երէկ տօնվեց ակադեմիկ Արսենևի գիտական և գրական-հրապարակախօսական գործունէութեան 50-ամեայ յօբելեանը։

ԲՐԻՒՍԷԼ, 24 յունվարի։ Տեղական լրագիրների տեղեկութիւնների համաձայն, էլէկտրաքարշը անցել է Լէօպօլդ թագաւորի կառքի վրայով։ Թագաւորը շպրտվել է մի կողմ և ստացել է առողջութեան անվնաս ցնցումներ և ջարդուածքներ։ Էլէկտրաքարշի վագօնում նստողներից ոչ ոք չէ վնասվել։

26 յունվարի

ՊԱՐԻԶ, 25 յունվարի։ Մինիստրների խորհուրդը միաձայն ընդունեց եկամտային հարկին վերաբերվող օրինագիծը։

ԲԻԶԵՐՏ, 25 յունվարի։ Երէկ Պետերբուրգ մեկնեցին մինիստրի օգնական նշանակված փոխ-ծովակալ Բօստրէմը։ Ծովափին հաւաքված օֆիցէրները և կադէտները «ուռա» աղաղակներով ճանապարհ դրին շոգենաւը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը բացատրել է մահմեդական պատգամաւորութեան, որ օտարազգի դասագրքերի ռուսերէն և տեղական լեզուներով փոփոխելը 1906 թ. մարտի 31-ի կանոնների համաձայն պարտադիր չէ. օտարազգի դպրոցների վրա սահմանած հսկողութեան կանոնները մէդրեսէ, մէկտեբ-կրօնական դպրոցներին չեն վերաբերվում։ Մինիստրը խոստացել է մի փոքր ժամանակից յետոյ, տեսնելով թէ ինչ արդիւնք կը տայ այդ կանոնների գործադրութիւնը, կազմել մի մասնաժողով՝ նրանց վերաքննելու համար։ Այս մասնաժողովի կազմի մէջ բացի ժողովրդական լուսաւորութեան և ներքին գործերի մինիստրների պաշտօնեաներից մտնելու են նաև մահմեդականների ներկայացուցիչները Օրէնբուրգի մուֆթիի ցուցմունքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Ֆինանսների մինիստրութիւնը օրէնսդրական հաստատութիւնների քննութեան է ներկայացրել մինիստրների խորհրդի ընդունած այն օրինագիծը, որով տուրք է նշակվում ծխախոտի գիլզաների և ծխախոտի թղթի վրա 20 կոպ. իւրաքանչիւր 1000 հատ գիլզայից և 1 կոպէկ—մի կապոց ծխախոտի թղթից, որոնց թիւը 50 անցնելու չէ։ Գործարանների տէրերը պարտաւոր են ամեն տարի ձեռք բերել 1000 ր., ոչ պակաս գումարի բանդերօլներ։ Իւրաքանչիւր անձն, ով գիլզաներ պատրաստելու գործից ունի, պարտաւոր է այդ մասին յայտնել ակցիզնի վարչութեան։

Յունվարի 25-ին անգլիական դեսպանի մօտ տեղի ունեցաւ առաջին պաշտօնական ընդունելութիւնը։ Ներկայ էին դիպլօմատիկան մարմինը, մինիստրները, Պետական Խորհրդի անդամները, սենատորները, Պալատի առաջին և երկրորդ կարգի պաշտօնեաները, կայսերական շքախումբը, գեներալիտետը, բարձր հասարակութեան ներկայացուցիչները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻՆՕՎԵԱՆ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՀԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ց. Գուրգինօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Կ. Ի. ԳԶԷԼԻԵՎ—6½—7½ ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Շ.) 16—100

Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ
տնկարանը առաջարկում է պատուաստած մրգերի
ծառեր եւ թուփեր
ԷԺԱՆԱՑՐԱԾ ԳՆԵՐՈՎ
Ծառացուցակներն ուղարկվում են ձրի։
Հասցէն՝ Гори, Тиф. губ.
(Ե. Ա.) 1—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը առաւ. 10—12 ժ.
Տելեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(Ա. Օ.) 94—150

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկևիչի փողոցների, № 33/15.
(Ա. Օ.) 98—100

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
Ցանկանում է հայ ընտանիքում ունենալ բօննայի կամ ուրիշ համապատասխան պաշտօն։ Դիմել՝ «Մշակի» խմբագրատուն, կամ Исарловская ул. (близъ реальн. училища, № 6, Мирзаянцъ. 3—3

Լոյս տեսաւ
Գ. ԻՐԻԵՎԻՉԻՑ
փոխադրած
Ա. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ
Թուաբանական օրինակներ եւ խնդիրներ
Գ. տարին
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ
(Խնդիրները դասաւորած են տեսակներով)

Մամուլի տակ է
Համառօտ երկրաչափութիւն

Պատրաստ է տպագրութեան համար
Թուաբանական օրինակներ եւ խնդիրների ժողովածու
(Կոտորակների տեսութիւն և ընդհանուր կանոնները)
Դիմել Թիֆլիսի գրախանութներին կամ Тифлисъ М. Самуэляну.
(Շ. Ե.) Օ. Մ. 1—5

ԿՈՉ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Թիֆլիսի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան Վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն յարգելի հայ հասարակութեան, որ փետրվար—մարտ ամիսների ընթացքում բանալու է Թիֆլիսում Որբանոց։

Ուստի խոնարհաբար խնդրում է ամէն մի հայի, իր ույժերի համեմատ նպաստել, ով ինչով կարող է, թէ տան կահկարասիքով, (օր. մահճակալ, պահարան և այլն) թէ խոհանոցի ամանեղէններով և թէ հագուստեղէնի կտորներով, որով որոշ չափով կը դիւրացնեն և կը թեթևացնեն որբանոցի սկզբնական անհրաժեշտ ծախսերը։ Վարչութիւնս շնորհակալութեամբ կընդունէ իւրաքանչիւր հայի նպաստը։

Նուէրներ ընդունվում են ամեն օր առ. ժ. 10—12 ը հետևեալ հասցէով. Միխայլօվսկի պր. տ. № 65. ֆօտօգրֆիա Այվազեանի, տիկին Այվազեանին և Պասկևիչ փ. տ. № 13, տիկին Ասլանեանցին նուէրները բերողը կը ստանայ ստացական. բացի այդ՝ լրագրներում էլ առանձին հաշիւ կը տրվի։ 1—8

Լոյս տեսաւ Մուրճ
№ 1
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) ՄԱՐԳԱՐԷ, Պուշկինի, թ. Լ. Մանուէլեանի . . . . .
2) ԱՅՍՊԷՍ ԿԸ ԽՕՍԷՐ ԶԱՐԱԴՈՒՍՏՐԱՆ, Նիցշէի. թ. Տ. Է.-ի6
3) ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ, Շիլլերի, թ. Լ. Մանուէլեանի
4) ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑ, Մինաս Ցոլակի . . . . .
5) ՆԵՐԿԻՐԸ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ, Յ. Այվազեանի . .
6) ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ, D.-ի . . . . . .
7) ԱԲԴՈՒԼ-ՀԱՄԻԴԻ ԳԱՂՏՆԻ ԴԱՒԻԹԸ, Սէֆեր Բէյի .
8) ԵԳԻՊՏՈՍԻՑ, Ա. Շ.-ի, ...
9) «ՈՒ ՀՈԳԻՈՒՍ ՄԷՋ», բանաստեղծութիւն Հր. Փալեանի
10) ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ, Իշ. Գ. Մ. Թումանովի . . . .
11) ԳՈՐԾՈՒՆԷԱՅ ԿԵԱՆՔԸ, Ռուզվելթի, թարգմ. Դր. Ն. Տ. Ս.-ի . . . .
12) ՅԻՇԻՐ ՀՈՂԱԾԻՆ, Պլեշչէեվի, թ. Ալ. Ծատուրեանի
13) ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, (Պատկեր կրթուած հայ բուրժուայի կեանքից) Գ.—Կ. . . . .
14) ՀՋՕՐՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՑ ՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, Մ. Կ.-ի . . . .
15) ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ Բ. Իշխանեանի . .
17) ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . .
16) ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ 1) Ա. Նալբանդեանի «Առակներ» Լ. Մ. 2) Բրակէ՝ «Կորչեն սոց.-դեմոկրատները» Na. 3) Ե. Գօգէբաշվիլի՝ «Ի՞նչ արաւ օրօրոցի երգը» D.
18) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ընտրողական պայքար.—Բիւրոկրատիական մանեօվրներ.—Դաշնակցութիւնը ժողովրդի մէջ.—Կղերական բիւրոկրատիայի «ժամանակաւոր» օրէնքը։ . . . .
19) ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մարդկային կեանքի ովկեանոսը.—Շարժումներ.—Պարսկական սահմանադրութիւնը.—Ֆրանսիական դեմօկրատիզմը.—Րայխստագի վերջին ընտրութիւնների առիթով.—Նոր դատարանակութիւն.—«Արժէնեայի» խոստովանքը։ . . . .
20) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . .
21) ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . .

թիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ“.
❊ Օգտակար ընծայ առաջիկայ տօներին ❊
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՊԱՀԵՍՏ
ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ
ԵՒ
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ
ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ
Ստացված են մեծ թւով ամենավերջին նորութիւնների պլաստինկաներ, զանազան լեզուներով։
ԳՆԵՐԸ ԱՐԺԱՆ ԵՆ
Պատկերազարդ կատալօգները և պիեսների ցուցակները ուղարկվում և տրվում են ձրի։

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ
TRADE MARK
GRAMMOPHON
ԳՈՐԾ. ԴՐՈՇՄ
„ԳՐԱՄՄՕՖՕՆ“
Ակցիօներական ընկերութեան
Թիֆլիսի բաժանմունք
Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. № 9.
Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія".
(Շ. Շ.) 18—25
Ապարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ“
Ապարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրու-

Տպարան «ՀԷՐՄԷՍ» ընկ.
Электропечатная Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская, ул. № 5